

Եվրոպական վիճակագրական համակարգի
որակի ապահովման շրջանակ

Բովանդակություն

Բովանդակություն.....	2
Ներածություն.....	3
Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակ.....	5
Ինստիտուցիոնալ միջավայր.....	5
Սկզբունք 4 Որակի հանձնառություն	5
Սկզբունք 5 Վիճակագրական գաղտնիություն	10
Սկզբունք 6 Անկողմնակալություն և օբյեկտիվություն.....	14
Վիճակագրական գործընթացներ.....	18
Սկզբունք 7 Հիմնավորված մեթոդաբանություն	19
Սկզբունք 8 Համապատասխան վիճակագրական ընթացակարգեր.....	23
Սկզբունք 9 Ռեսպոնդենտների ոչ ավելորդ ծանրաբեռնվածություն	30
Սկզբունք 10 Ծախսերի արդյունավետություն.....	35
Վիճակագրական արտադրանք	38
Սկզբունք 11 Համապատասխանություն	38
Սկզբունք 12 Ճշգրտություն և արժանահավատություն.....	40
Սկզբունք 13 Յուրաժամանակություն և ճշտապահություն	43
Սկզբունք 14 Համաձայնեցվածություն և համադրելիություն	45
Սկզբունք 15: Մատչելիություն և պարզություն	48

Ներածություն

Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակը (ESS QAF/ ԵՎՀ ՈԱՇ) օժանդակող փաստաթուղթ է նպատակաուղղված Եվրոպական փորձառության օրենսգրքի (ՓՕ) իրականացման աջակցմանը: Այն սահմանում է հնարավոր գործողությունները, մեթոդները և գործիքները, որոնք կարող են ուղեցույց և ապացույց հանդիսանալ ՓՕ-ի ցուցանիշների իրականացման համար: ԵՎՀ ՈԱՇ առաջին տարբերակը, որն ընդգրկում էր 4-րդ և 7-ից 15-րդ սկզբունքները հրապարակվել է 2011 թ. օգոստոսին: Եվրոպական վիճակագրական համակարգի հանձնաժողովի (ESSC/ԵՎՀՀ) կողմից 2011 թ. սեպտեմբերի 28-ին ընդունված ՓՕ-ի վերանայումից հետո, ԵՎՀ ՈԱՇ-ը 2012 թ. նոյեմբերին արդիականացվել և հաստատվել է վիճակագրության որակի գծով աշխատանքային խմբի կողմից:

Ներկայիս տարբերակը (տ1.2) բխում է աշխատանքային խմբի փորձագիտական գնահատման 2013-2015թթ. իրականացրած աշխատանքներից՝ մշակելու ամբողջական և համաձայնեցված ինքնագնահատման հարցաթերթ, մշակելու մի շարք մեթոդներ և ընթացակարգեր ՓՕ-ի 5-րդ և 6-րդ սկզբունքների համապատասխանությունը գնահատելու նպատակով: Ի լրումն, ԵՎՀ ՈԱՇ-ի 1.2 տարբերակը առաջարկում է որոշ գործողությունների, մեթոդների և գործիքների ճշգրիտ կարգավորում այլ սկզբունքների համար: Առաջարկվող փոփոխությունները արդյունք են հանդիսանում հաճախակի տրվող հարցերի (FAQ/ ՀՏՀ) փաստաթղթի վերլուծության, որը ստեղծվել է փորձագիտական գնահատումների և ԵՎՀ աշխատանքային խմբի առաջարկությունների արդյունքում՝ փորձագիտական գնահատման մեթոդաբանությունը կատարելագործելու նպատակով: ՀՏՀ-ում ներկայացված սահմանումները ավելացվել են որպես ծանոթագրություններ: Լեզվական բարելավումները նույնպես ընդգրկվել են ընթացիկ վերանայման մեջ: ԵՎՀ ՈԱՇ-ի 1.2 տարբերակը ընդունվել է ԵՎՀՀ-ի կողմից 2015թ. մայիսին:

Հետևած մոտեցում

ԵՎՀ ՈԱՇ -ը սկզբունքից դեպի ցուցանիշ համակարգված կերպով պարունակում է սահմանված գործունեությունների, մեթոդների և գործիքների վերաբերյալ առաջարկություններ, որոնք դրսևանում են ցուցանիշի գործնական և արդյունավետ իրականացումը: Այն արտացոլում է Եվրոպական վիճակագրական համակարգում (ESS/ԵՎՀ) արդեն օգտագործվող գործողությունների, մեթոդների և գործիքների խելամիտ համակցումը:

Ի լրումն, այդ առաջարկվող գործողությունները, մեթոդները և գործիքները մշակված են այնպես, որ դրանք կախված չլինեն անդամ պետություններում գոյություն ունեցող կազմակերպչական լուծումներից և հաճախ առաջնորդվում են կոնկրետ օրինակներով, որոնք արդյունավետ են գործել որոշ երկրներում: Սահմանված բոլոր գործողությունները, մեթոդները և գործիքները վերաբերում են ներկա փորձերին, որ արդեն իսկ իրականացվում են որոշ ազգային վիճակագրական ինստիտուտներում, որտեղ դրանք ապացուցել են օգտակար լինելը:

Ընդհանուր առմամբ ԵՎՀ ՈԱՇ-ը կարող է օգտագործվել որպես տեղեկատվական շրջանակ Եվրոպական վիճակագրության արտադրության և տարածման գործընթացներում մասնակցող բոլոր տարբեր դերակատարների կողմից, օրինակ՝ ազգային վիճակագրական ինստիտուտներ կամ վիճակագրական այլ մարմիններ:

ԵՎՀ ՈԱՇ-ի կազմակերպումը

Առաջարկվող գործողությունները, մեթոդները և գործիքները, որոնք օգտագործվել են յուրաքանչյուր ցուցանիշին աջակցելու նպատակով, սահմանվում են ինստիտուցիոնալ և արտադրանք / գործընթաց մակարդակներում, որտեղ կիրառելի է արտացոլելով ընդունման և կիրառման մակարդակը: Դրանք ներկայացնում են ընդհանուրից մինչև առավել կոնկրետ և մանրամասնեցված նկարագիր: Քանի որ Փորձառության օրենսգրքի որոշ ցուցանիշներ իրենք էլ առաջարկություններ են հանդիսանում, աջակցող գործողությունները, մեթոդները և գործիքները կարող են լինել առավել մանրամասնեցված և առավել կոնկրետ բնույթի՝ ցուցանիշի իրականացումը դյուրինացնելու նպատակով: Առաջարկվող գործողությունների, մեթոդների և գործիքների բնույթը կարող է հանգեցնել դրանց բազմակի օգտագործման տարբեր ցուցանիշների աջակցման նպատակով: Ի դեպ, մեկ կոնկրետ գործողություն / մեթոդ / գործիք կարող է աջակցություն տրամադրել մեկ սկզբունքի հետ կապված բոլոր ցուցանիշներին:

ԵՎՀ ՈԱՇ-ի հետագա զարգացումները

ԵՎՀ ՈԱՇ-ը մնում է ճկուն և բաց գործողությունների, մեթոդների և գործիքների հետագա մշակման համար, որպեսզի հնարավոր լինի նպաստել ԵՎՀ-ի անհամապատասխանությանն ու հատուկ առանձնահատկություններին:

Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակ

Ինստիտուցիոնալ միջավայր

Ինստիտուցիոնալ և կազմակերպական գործոնները զգալի ազդեցություն ունեն Եվրոպական վիճակագրություն մշակող, արտադրող և տարածող վիճակագրական մարմնի արդյունավետության և արժանահավատության վրա: Համապատասխան հարցերն են՝ պրոֆեսիոնալ անկախությունը, տվյալների հավաքագրման համար իրավասությունը, ռեսուրսների համապատասխանությունը, որակի հանձնառությունը, վիճակագրական գաղտնիությունը, անկողմնակալությունը և օբյեկտիվությունը:

Սկզբունք 4. Որակի հանձնառություն

Վիճակագրական մարմինները պարտավորություն են կրում որակի համար: Նրանք սիստեմատիկաբար և պարբերաբար բացահայտում են ուժեղ և թույլ կողմերը շարունակաբար կատարելագործելու գործընթացի և արտադրանքի որակը:

Ցուցանիշ 4.1. Որակի քաղաքականությունը սահմանվում է և մատչելի է հանրության համար: Կազմակերպական կառուցվածքը և գործիքներն առկա են զբաղվելու որակի կառավարմամբ:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Որակի հանձնառություն հայտարարություն:** Որակի հանձնառության հայտարարությունը հանրայնացվում է, ներկայացնելով վիճակագրությունում որակի հետ կապված սկզբունքները, փորձերը և պարտավորությունները, որոնք համահունչ են Առաքելության և տեպլականի հայտարարություններում սահմանված նպատակների հետ:
2. **Որակը կառավարելու կազմակերպական կառուցվածք:** Վիճակագրական մարմնի շրջանակում կա մի պարզ կազմակերպական կառուցվածք որակը կառավարելու համար: Նման կառուցվածքի օրինակներն են՝
 - Որակի հանձնաժողով;
 - Որակի կառավարիչ;
 - Որակի կենտրոնացված ստորաբաժանում;
 - Այլ կառուցվածքներ (օրինակ՝ աշխատակիցների ընտրված խումբ, որոնք վերապատրաստված են որպես “որակի օդաչուների” , որոնք

կգործեն որպես ծրագրի/ գործընթացների ղեկավարներ /խորհրդատուներ):

3. **Որակի ուղեցույցների սահմանում:** Սահմանված են ուղեցույցներ, թե ինչպես պետք է իրականացնել որակի կառավարումը վիճակագրական արտադրության գործընթացում, ընդգրկելով՝
 - Վիճակագրական արտադրության գործընթացի տարբեր փուլերի նկարագրությունը և հղումները դեպի համապատասխան տեղեկատվական փաստաթղթավորում յուրաքանչյուր փուլի համար, հետևելով Ընդհանուր Վիճակագրական Բիզնես գործընթացների Մոդելին (GSBPM) կամ գործընթացի ցանկացած այլ համարժեք ներկայացմանը;
 - Մեթոդների նկարագրություն՝ դիտարկելու վիճակագրական արտադրության գործընթացի յուրաքանչյուր փուլի որակը:
4. **Որակի ուղեցույցների առկայություն:** Որակի ուղեցույցները, ինչպես սահմանված է վերևում, հասանելի են բոլոր սպառողներին՝ առնվազն ամփոփ տարբերակով:
5. **Փաստաթղթավորման ենթակառուցվածք:** Առկա է համապատասխան ենթակառուցվածք, որպեսզի ապահովվի որակի վերաբերյալ արդիականացված փաստաթղթավորումը:
6. **Ուսումնական դասընթացներ:** Հատուկ ուսումնական դասընթացները աջակցում են որակի քաղաքականությանը և պարբերաբար իրականացվում են համապատասխան անձնակազմի համար:

Ցուցանիշ 4.2. Առկա են ընթացակարգեր վիճակագրական արտադրության գործընթացի որակի պլանավորման և մշտադիտարկման համար:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Մեթոդաբանական և տեխնիկական աջակցության և ընդհանուր գործիքներ:** Մեթոդաբանական և տեխնիկական աջակցության և ընդհանուր գործիքներ են տրամադրվում մասնագիտացված /համապատասխան ստորաբաժանումների, մասնավորապես՝ որակի, մեթոդաբանության և SS ստորաբաժանումների կողմից, գործընթացի որակի մշտադիտարկումն/որակի ապահովման պլանը իրականացնելու նպատակով:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

- 2. Գործընթացի որակը մշտադիտարկելու ընթացակարգեր:** Ընթացակարգերն առկա են վիճակագրական գործընթացի տարբեր փուլերի որակը մշտադիտարկելու համար, օրինակ՝ որակի ապահովման պլանին, փորձագիտական խմբի պարբերական հանդիպումներին համապատասխան:
- 3. Որակի ապահովման պլան:** Որակի ապահովման պլանը կամ որևէ այլ համանման սխեմա, նկարագրում է աշխատանքային ստանդարտները, պաշտոնական պարտականությունները (ինչպիսիք են՝ օրենքները և ներքին կանոնները) և որակի վերահսկման մի շարք գործողություններ՝ կանխելու և վերահսկելու սխալները, գնահատելու որակի ցուցանիշները և վերահսկելու վիճակագրական արտադրության գործընթացի յուրաքանչյուր փուլի տարբեր միավորները:

Որակի ապահովման պլան կամ որևէ այլ համանման սխեմա.

- հաշվի է առնում սպառողների պահանջները և ստուգում է վիճակագրական գործընթացի համապատասխանությունը;
- ապահովում է վիճակագրական արտադրության գործընթացի տեխնիկական և կազմակերպչական արդյունավետ կառուցվածքը;
- ապահովում է տվյալների հավաքագրման որակը, այդ թվում վարչական տվյալների օգտագործումը;
- ապահովում է տվյալների մշակման որակը (կողավորում, խմբագրում, իմպուտացիա և գնահատում);
- ապահովում է որակի շրջանակում հնարավոր փոխզիջումների սիստեմատիկ ուսումնասիրությունը;
- վստահեցնում է, որ վերը նկարագրված տեղեկատվությունը հասանելի և հասկանալի է սպառողների համար և ներառված է որակի հաշվետվություններում;
- վստահեցնում է, որ սպառողի արձագանքները / հետադարձ կապը կանոնավոր կերպով հավաքագրվում և գնահատվում են;
- հավաստիացնում է, որ համապատասխան մեթատվյալները տրամադրվում են սպառողներին նրանց որակի ընկալմանն աջակցելու նպատակով;

Ցուցանիշ 4.3. Արտադրանքի որակը պարբերաբար մշտադիտարկվում է և գնահատվում կապված հնարավոր փոխզիջումների հետ և հաղորդվում համաձայն Եվրոպական վիճակագրության որակի չափանիշների:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. Գործընթացի որակը մշտադիտարկելու Ընթացակարգեր: Որակի հաշվետվության վրա հիմնված ընթացակարգերը առկա են արտադրանքի որակը ներքին մշտադիտարկման համար: Արդյունքները պարբերաբար վերլուծվում են և ղեկավարությունը տեղեկացված է բարելավման գործողությունները որոշելու նպատակով:

2. Սպառողների բավարարվածության հետազոտություններ: Սպառողների բավարարվածության հետազոտությունները կամ այլ անուղղակի մեթոդները իրականացվում են կանոնավոր կերպով և դրանց արդյունքները հանրայնացվում են և ներառվում, որտեղ օգտակար է որակի հաշվետվություններում, քանի որ դրանք մշտադիտարկում են "համապատասխանությունը", ի թիվս այլ չափումների:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

3.Սպառողին ուղղված որակի հաշվետվություններ: Սպառողին ուղղված որակի հաշվետվությունները հանրայնացվում են, հաշվի առնելով տեղեկատվական մեթատվյալների և որակի ցուցանիշների ստանդարտները, մասնավորապես Միասնական Ամբողջացված Մեթատվյալների Կառուցվածքը (SIMS):

4. Արտադրողին ուղղված որակի հաշվետվություններ: Արտադրողներին ուղղված որակի հաշվետվությունները կանոնավոր կերպով հրապարակվում են (Պարբերականությունը պետք է որոշվի. օրինակ՝ կոնկրետ կանոնակարգով և հետազոտության ժամկետով), հաշվի առնելով տեղեկատվական մեթատվյալների և որակի ցուցանիշների ստանդարտները, մասնավորապես Միասնական Ամբողջացված Մեթատվյալների Կառուցվածքը (SIMS):

5. Արտադրանքի որակի մշտադիտարկում: Սպառողների և արտադրողների որակի հաշվետվողականությունը օգտագործվում է ժամանակի ընթացքում որակի կանոնավոր մշտադիտարկման համար:

Ցուցանիշ 4.4. Իրականացվում է հիմնական վիճակագրական արտադրանքների կանոնավոր և մանրակրկիտ վերանայում, օգտագործելով արտաքին փորձագետների, որտեղ հնարավոր է:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Որակի վերանայումներ իրականացնելու պլան:** Որակի վերանայումների (ինչպիսիք են՝ աուդիտը և ինքնագնահատումը) անցկացման պլանը սահմանվում / իրականացվում է կանոնավոր կերպով առանցքային վիճակագրական արտադրանքների համար և սիստեմատիկորեն այն դեպքում, երբ գործընթացները վերակազմավորվում են:
2. **Որակի վերանայումների կազմակերպական կառուցվածք:** Որակի վերանայումների իրականացման համար առկա է համապատասխան կազմակերպական կառուցվածք ներքին աուդիտների և ինքնագնահատումների համար:
3. **Ներքին աուդիտորների վերապատրաստում:** Որակի ներքին աուդիտորները վերապատրաստվում են աուդիտորական մեթոդների և գործելակերպի վերաբերյալ:
4. **Տեղեկատվական փաստաթղթավորում:** Որակի հաշվետվությունները որպես տեղեկատվական փաստաթղթավորում ունեն՝
 - Որակի ուղեցույցներ / որակի ապահովման պլան կամ նմանատիպ սխեմա;
 - Արտադրողին ուղղված որակի հաշվետվություններ և/կամ սպառողին ուղղված որակի հաշվետվություններ;
 - Արտադրողների կողմից լրացված ինքնագնահատման հարցաթերթեր;
 - Աուդիտի հարցազրույցների հաշվետվություններ;
 - Ռեսպոնդենտների և / կամ սպառողների կողմից լրացված հարցաթերթեր;
 - Ցանկացած այլ բավարարվածության հետազոտություն:
5. **Գործողությունների պլաններ:** Որակի վերանայումների եզրահանգումները հանգեցնում են գործողությունների պլանների:
6. **Սպառողների հետ հետադարձ կապ:** Տարբեր սպառողների հետ հետադարձ կապը օգտագործվում է որպես գործողությունների պլաններում ներդրում (օգտագործելով սպառողների բավարարվածության հետազոտությունները կամ ֆոկուս խմբերը):
7. **Արտաքին մասնագետների ներգրավում:** Արտաքին փորձագետները ներգրավվում են առանցքային վիճակագրական ոլորտները վերանայելու համար (օրինակ՝ ԱՄՆ-ի կողմից ստանդարտների և կանոնների տվյալների վերանայում (ROSC)):
8. **Համեմատական վերլուծություն:** Իրականացվում է հիմնական վիճակագրական գործընթացների համեմատական վերլուծություն այլ

վիճակագրական մարմինների հետ՝ լավագույն փորձերը բացահայտելու նպատակով:

Սկզբունք 5. Վիճակագրական գաղտնիություն

Պետք է բացարձակապես երաշխավորված լինի տվյալներ տրամադրողների (տնային տնտեսություններ, ձեռնարկություններ, կառավարման մարմիններ և այլ ռեսպոնդենտներ) մենությունը և իրենց կողմից տրամադրած տեղեկատվության գաղտնիությունն ու դրա միայն վիճակագրական նպատակներով օգտագործումը:

Ցուցանիշ 5.1. Վիճակագրական գաղտնիությունն երաշխավորված է օրենքով:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Հստակ դրույթներն ամրագրված են օրենքում:** Վիճակագրական գաղտնիության պահպանման վերաբերյալ հստակ դրույթներն առկա են վիճակագրական օրենքում կամ այլ համապատասխան օրենսդրության մեջ:

Ցուցանիշ 5.2. Անձնակազմը ստորագրում է պաշտոնում նշանակվելու իրավական գաղտնիության պարտավորություններ:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Գաղտնիության պարտադիր պարտավորություններ:** Վիճակագրական գաղտնիության պահպանման պարտավորությունները գոյություն ունեն վիճակագրական մարմիններում և ստորագրվում են ամբողջ անձնակազմի կողմից տեղում կամ աշխատանքի նշանակվելիս, ինչպես նաև այն արտաքին կողմերի կողմից, ովքեր վիճակագրական մարմնի անունից աշխատանք են ձեռնարկում: Փոփոխության դեպքում, նման համաձայնագրերը պետք է արդիականացվեն և կրկին ստորագրվեն ամբողջ անձնակազմի կամ շահագրգիռ կողմերի կողմից:

Ցուցանիշ 5.3. Տույժեր են նախատեսված վիճակագրական գաղտնիության ցանկացած դիտավորյալ խախտումների համար:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Իրավական շրջանակի վրա հիմնված դրույթների առկայություն:** Վիճակագրական օրենքում առկա են ազգային դրույթներ կամ այլ իրավական

դրույթներ վիճակագրական գաղտնիությունը խախտելու համար վարչական, տուգանային և կարգապահական պատժամիջոցների վերաբերյալ:

2. **Պատժամիջոցների վերաբերյալ դրույթները հասանելի են հանրությանը:** Պաշտոնական վիճակագրական տեղեկատվության սպառողները իրազեկված են վիճակագրական գաղտնիությունը խախտելու պատժամիջոցների վերաբերյալ առկա դրույթների մասին, քանի որ այդ տեղեկատվությունը հրապարակայնորեն առկա է և հասանելի նրանց:

Ցուցանիշ 5.4. Ուղեցույցները և հրահանգները տրամադրվում են անձնակազմին վիճակագրական գաղտնիության պաշտպանության համար արտադրման և տարածման գործընթացներում: Գաղտնիության քաղաքականությունը հայտնի է դարձված հանրությանը:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Գաղտնիության քաղաքականություն:** Գաղտնիության քաղաքականությունը հրապարակայնորեն հասանելի է դարձվում, ներկայացնելով սկզբունքներ և պարտավորություններ վիճակագրական գաղտնիության հետ կապված, որոնք համահունչ են Առաքելության և տեսլականի հայտարարություններում սահմանված նպատակների հետ:
2. **Վիճակագրական գաղտնիության պահպանության կազմակերպական կառուցվածք:** Վիճակագրական մարմնում կա համապատասխան կազմակերպական կառուցվածք՝ գաղտնիությունը ապահովելու և ուղեցույցներ տրամադրելու, համապատասխան մեթոդաբանություններ առաջարկելու և պարբերաբար տվյալների պաշտպանության համար օգտագործվող մեթոդները ուսումնասիրելու համար:
3. **Ուղեցույց անձնակազմի համար:** Վիճակագրական մարմինը պատրաստում և անձնակազմին է տրամադրում գրավոր հրահանգներ և ուղեցույցներ, որպեսզի պահպանվի վիճակագրական գաղտնիությունը, երբ վիճակագրական դեգադրեզացված տվյալների տարածում է տեղի ունենում:
4. **Գաղտնիության ապահովման մեթոդներ:** Գաղտնիության բնագավառում մշտապես իրականացվում է շարունակական ուսումնասիրություն: Օգտագործվող մեթոդները ընտրվում են այնպես, որ օպտիմալ ձևով

խոչընդոտեն բացահայտման ռիսկի և տեղեկատվության կորստի միջև փոխզիջմանը:

- 5. Ռեսպոնդենտների իրազեկվածությունը գաղտնիության պարտավորությունների վերաբերյալ.** Ռեսպոնդենտները, որոնց հետ կապ է հաստատվել տվյալների հավաքագրման ընթացքում իրազեկվում են, որ վիճակագրական մարմինը լիովին պարտավորություն է կրում տվյալների պաշտպանության և վիճակագրական գաղտնիության համար և տվյալները միայն օգտագործվում են վիճակագրական նպատակներով և անձնական տվյալները ոչ մի հանգամանքում չեն տրամադրվում:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

- 6. Վիճակագրական բացահայտման վերահսկման մեթոդները:** Առկա են դրույթներ ապահովելու, որ մինչ վիճակագրական տեղեկատվության թողարկումը (ագրեգացված տվյալներ և միկրոտվյալներ), կիրառվում են վիճակագրական բացահայտման վերահսկման մեթոդներ:
- 7. Արտադրանքի ստուգում:** Ամեն անգամ, երբ ապահով միջավայրում մուտք է կատարվում գաղտնի վիճակագրական տեղեկատվություն (օրինակ՝ հեռահար մուտք, ապահով կենտրոն, հեռահար աշխատանք), ամբողջ արտադրանքը մինչ թողարկվելը ստուգվում է բացահայտման հետ կապված: Առկա են գործընթացներ, որոնք կանխում են արտադրանքի թողարկումն առանց բացահայտումը ստուգելու:

Ցուցանիշ 5.5. Ֆիզիկական, տեխնոլոգիական և կազմակերպչական դրույթներն առկա են պաշտպանելու վիճակագրական տվյալների բազաների անվտանգությունն ու ամբողջականությունը:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

- 1. SS անվտանգության քաղաքականություն:** Առկա է SS անվտանգության քաղաքականություն գաղտնի և զգայուն տվյալների պաշտպանության և անվտանգության համար, ընդգրկելով ողջ բիզնես, տեխնիկական, իրավական և կանոնակարգող միջավայրը, որում գործում է վիճակագրական մարմինը: Այդ քաղաքականությունը լայնորեն հայտնի է վիճակագրական մարմնի անձնակազմին:

2. **Անվտանգության գործընթացներ և միջոցներ:** Վիճակագրական մարմնում առկա են համապատասխան ֆիզիկական և տրամաբանական անվտանգության միջոցներ և գործընթացներ ստուգելու, որ տվյալների անվտանգությունն ապահովված է և կանխելու տվյալների արտահոսքը և վիճակագրական գաղտնիության խախտումը:
3. **SS անվտանգության աուդիտներ:** Իրականացվում են վիճակագրական մարմնի տվյալների անվտանգության համակարգի անվտանգության կանոնավոր և սիստեմատիկ աուդիտներ: Աուդիտը գնահատում է յուրաքանչյուր գործիք և երաշխիք, որոնք պետք է պաշտպանեն վիճակագրական տվյալների բազաների անվտանգությունն ու ամբողջականությունը:
4. **Ապահով պահոց և տվյալների մուտքի մշտադիտարկում:** Բոլոր վիճակագրական տվյալները պահվում են ապահով միջավայրերում, որոնք կանխում են կողմնակի անձանց մուտքը: Վիճակագրական բազաներ բոլոր մուտքերը խստորեն վերահսկվում և գրանցվում են: Սպառողի իրավունքները գրանցվում և պահվում են արդիականացված՝ կանխելու չարտոնված մուտքը: Անուններն ու հասցեները կամ այլ անձնական նույնացուցիչները հնարավորինս շուտ ջնջվում են:

Ցուցանիշ 5.6. Խիստ արձանագրություններ են կիրառվում արտաքին սպառողների հանդեպ հետազոտական նպատակներով վիճակագրական միկրո տվյալներին մուտք գործելու համար:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Գիտական նպատակներով գաղտնի տվյալներ մուտքի պայմանները:** Գիտական նպատակներով գաղտնի տվյալներ հետազոտողի մուտքի տրամադրման հստակ պայմանները սահմանված են վիճակագրական օրենքում կամ համապատասխան կանոնակարգերում: Այդ պայմանները հրապարակայնորեն հասանելի են վիճակագրական մարմնի կայքում:
2. **Գիտական նպատակներով գաղտնի տվյալներ հետազոտողի մուտքի երաշխիքները:** Վիճակագրական մարմինը ապահովում է, որ բոլոր իրավական, տեխնիկական և տրամաբանական երաշխիքները առկա լինեն գաղտնի տեղեկատվությունը պաշտպանելու նպատակով: Սպառողները պարտավորվում են ստորագրել համաձայնագիր՝ միկրոտվյալների օգտագործման կանոնների վերաբերյալ:
3. **Տվյալների կրկնօրինակման վերահսկում:** Վիճակագրական մարմինն ունի համապատասխան միջոցներ տվյալների կրկնօրինակումը կանխելու համար

(տվյալները ապօրինաբար կրկնօրինակված են կամ ջնջված չեն օգտագործելուց հետո):

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

4. **Միկրոտվյալների օգտագործման մշտադիտարկում:** Միկրոտվյալների օգտագործումը մշտադիտարկվում է բացահայտելու որևէ հանգամանք, որը կարող է խախտել տվյալների գաղտնիությունը: Ընթացակարգերը առկա են անհապաղ ուղղիչ գործողությունն ապահովելու նպատակով:

Սկզբունք 6. Անկողմնակալություն և օբյեկտիվություն

Վիճակագրական մարմինները մշակում, արտադրում և տարածում են Եվրոպական վիճակագրությունը հարգելով գիտական անկախությունը և օբյեկտիվ, պրոֆեսիոնալ և թափանցիկ ձևով, հավասարապես վերաբերվելով բոլոր սպառողներին:

Ցուցանիշ 6.1. Վիճակագրությունը կազմվում է օբյեկտիվ հիմքի վրա՝ սահմանված վիճակագրական նկատառումներով:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Անկողմնակալության և օբյեկտիվության ուղեցույցներ:** Անկողմնակալությունն ու օբյեկտիվությունն ապահովելու ուղեցույցներն առկա են վիճակագրական մարմնում և հայտնի են վիճակագրական անձնակազմին: Ուղեցույցների իրականացումը մշտադիտարկվում է:
2. **Արտաքին գործընկերների ընտրության օբյեկտիվություն:** Վիճակագրական հետազոտություններ/վիճակագրական մարմնի աշխատանքներ իրականացնելու նպատակով արտաքին գործընկերների ընտրության չափանիշներն օբյեկտիվ և հանրայնացված են:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

3. **Մեթոդաբանական օբյեկտիվություն և լավագույն փորձեր:** Աղբյուրները, հասկացությունները, մեթոդները, գործընթացները և տվյալների տարածման ձևերը ընտրվում են վիճակագրական նկատառումների և ազգային և միջազգային սկզբունքների ու լավագույն փորձերի հիման վրա:

Ցուցանիշ 6.2. Աղբյուրների և վիճակագրական մեթոդների ընտրությունները, ինչպես նաև վիճակագրության տարածման մասին որոշումները տեղեկացվում են վիճակագրական նկատառումներով:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

- 1. Աղբյուրների ընտրության ընթացակարգեր:** Վիճակագրական տեղեկատվության աղբյուրների ընտրության ընթացակարգերը առկա են և հանրայնացված:
- 2. Աղբյուրների և մեթոդաբանության ընտրության չափանիշներ:** Աղբյուրների և վիճակագրական մեթոդների ընտրությունները, ինչպես նաև վիճակագրության տարածման վերաբերյալ որոշումները հիմնված են ընդհանուր համաձայնեցված մեթոդաբանության և լավագույն փորձերի վրա:
- 3. Աղբյուրների և մեթոդաբանության վերաբերյալ հիմնավորում և տեղեկատվություն:** Աղբյուրների և վիճակագրական մեթոդների ընտրությունները հստակ նշված են վիճակագրական հետազոտությունների / աշխատանքների որակի հաշվետվություններում: Առնվազն, սպառողին ուղղված որակի հաշվետվությունները հրապարակվում են վիճակագրական մարմնի կայքում:
- 4. Աղբյուրների և մեթոդաբանության ընտրության գնահատում:** Կանոնավոր գնահատումները վիճակագրորեն վավերացնում են հավաքագրման եղանակը և օգտագործված մեթոդաբանությունը:
- 5. Տվյալների չբացահայտման վիճակագրական նկատառումներ:** Տվյալների չբացահայտումը միայն թույլատրվում է վիճակագրական գաղտնիությունից ելնելով: Որակի հետ կապված հարցերի դեպքում տվյալները կարող են հրատարակվել հստակ սահմանված սահմանափակումներով:

Ցուցանիշ 6.3. Հրապարակված վիճակագրությունում հայտնաբերված սխալներն ուղղվում են հնարավորինս սեղմ ժամկետներում և հրապարակվում:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

- 1. Սխալների շտկման քաղաքականություն:** Վիճակագրական մարմինն ունի հստակ քաղաքականություն, թե ինչպես պետք է վարվել սխալների դեպքում, ինչպես արձագանքել, երբ դրանք հայտնաբերվել են և ինչպես դրանք ուղղել: Սխալների հետ վարվելու քաղաքականությունը հանրորեն մատչելի է:

2. **Մխալի վերաբերյալ հայտարարություն:** Առկա են հրապարակված վիճակագրությունում հայտնաբերված սխալի մասին հայտարարման գործընթացներ:
3. **Էական սխալների հայտարարություն և ուղղում:** Առկա են գործընթացներ անհապաղ հայտարարելու և տեղեկացնելու սպառողներին հրապարակված վիճակագրությունում հայտնաբերված էական սխալների մասին և այն մասին, թե երբ և ինչպես են դրանք ուղղվելու/ուղղվել: Մխալները հնարավորինս շուտ ուղղվում են:

Ցուցանիշ 6.4. Օգտագործվող մեթոդների և ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը հանրորեն մատչելի է:

1. **Մեթոդաբանական նշումներ և մեթատվյալներ:** Բոլոր վիճակագրական տվյալները ուղեկցվում են արտադրանքին և գործընթացին ուղղված համապատասխան մեթատվյալներով: Օգտագործված մեթոդների և ընթացակարգերի վերաբերյալ մեթոդաբանական նշումներն ու մեթատվյալներն առկա են տվյալների բազաներում և հրապարակվում են վիճակագրական մարմնի կայքում:
2. **Գործընթացների թափանցիկություն:** Վիճակագրական մարմինը փաստաթղթավորում է իր արտադրական գործընթացները: Այդ գործընթացների փաստաթղթավորումը առկա է թե անձնակազմի, թե սպառողների համար:

Ցուցանիշ 6.5. Վիճակագրական թողարկման ամսաթվերը և ժամերը նախապես հայտարարվում են:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Թողարկման օրացույցի առկայություն:** Հանրորեն մատչելի և դյուրինորեն հասանելի թողարկման օրացույցը հրապարակվում է և նախապես հայտնի է սպառողներին:
2. **Թողարկման օրացույցի կայունություն:** Տարածման ժամանակացույցում փոփոխությունները, երբ բացարձակապես անհրաժեշտ են համարվում, նախապես հրապարակայնորեն և անհապաղ հայտարարվում են և պատշաճ կերպով բացատրվում: Սկզբնական ժամանակացույցը մնում է հրապարակային:

Ցուցանիշ 6.6. Նախապես ծանուցում է տրվում հիմնական վերանայումների կամ մեթոդաբանություններում փոփոխությունների վերաբերյալ:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

- 1. Կանոնավոր վերանայումների օրացույց:** Կանոնավոր էական վերանայումների օրացույցը թողարկվում և հրատարակվում է վիճակագրական մարմնի կողմից:
- 2. Վերանայումների վերաբերյալ տեղեկատվության հաղորդում:** Վիճակագրական մեթոդաբանություններում էական վերանայումների կամ փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը վիճակագրական մարմնի կողմից հաղորդվում է նախապես՝ օգտագործելով տարբեր ուղիներ (օրինակ՝ վերանայումների օրացույցում, վիճակագրական աշխատանքների ծրագրում, կայքում, կոնկրետ սպառողներին ուղարկված նամակում և/կամ սպառողների հետ հանդիպման ժամանակ):

Ցուցանիշ 6.7. Բոլոր սպառողները պետք է ունենան հավասար մուտք վիճակագրական թողարկումներին միննույն ժամանակ: Ցանկացած արտոնյալ նախապես թողարկման մուտք ցանկացած արտաքին սպառողի համար սահմանափակվում, վերահսկվում և հրապարակվում է: Այն դեպքում, երբ տեղեկատվության արտահոսք է առաջանում, նախապես թողարկման կարգավորումները վերանայվում են, որպեսզի ապահովվի անկողմնակալությունը:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

- 1. Պաշտոնական դրույթներ:** Ուժի մեջ է պաշտոնական դրույթ, որը սահմանում է, որ վիճակագրական մարմինները պետք է մշակեն, արտադրեն և տարածեն վիճակագրությունը օբյեկտիվ, պրոֆեսիոնալ և թափանցիկ ձևով, հավասարապես վերաբերվելով բոլոր սպառողներին: Նախապես թողարկման մուտքերը, եթե նման փորձ լինում է, հանրայնացվում են:
- 2. Հավասար մուտքի մեխանիզմներ:** Վիճակագրական մարմնում առկա են բոլոր սպառողների հավասար մուտքը վիճակագրություն նախանշված ժամանակներում ապահովելու մեխանիզմներ:
- 3. Էմբարգո:** Եթե գոյություն ունեն էմբարգոյի գործընթացներ դրանք հայտնի են հանրությանը:

4. Արտահոսքերը կանխելու և կարգավորելու գործընթացներ: Առկա են տեղեկատվության արտահոսքերը կանխելու և առաջացման դեպքում դրանց դեմ պայքարելու գործընթացներ:

Ցուցանիշ 6.8. Վիճակագրական թողարկումները և մամուլի ասուլիսներում արված հայտարարություններն օբյեկտիվ են և անկուսակցական:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Օբյեկտիվությունը հայտարարություններում:** Վիճակագրական մարմի կողմից ներկայացրած վիճակագրական թողարկումները և հայտարարությունները բացառապես հիմնված են վիճակագրական եզրահանգումների և արդյունքների վրա:
2. **Ուղեցույցներ մամուլի հաղորդագրությունների համար:** Վիճակագրական մամուլի հաղորդագրությունները կազմվում են հետևելով հստակ և ստանդարտ ուղեցույցների:
3. **Ուղեցույցներ մամուլի ասուլիսների համար:** Առկա է մամուլի ասուլիսների նորմերի և կանոնների վերաբերյալ անձնակազմին հասանելի քաղաքականություն, որը ներառում է օբյեկտիվության և անկուսակցականության վերաբերյալ ուղեցույց:
4. **Մամուլի ասուլիսների անկախությունը:** Մամուլի ասուլիսները տեղի են ունենում անկախ քաղաքական իրադարձություններից և զերծ են քաղաքական հայտարարությունների վերաբերյալ մեկնաբանություններից:

Վիճակագրական գործընթացներ

Եվրոպական և այլ միջազգային ստանդարտները, ուղեցույցները և լավագույն փորձերն ամբողջությամբ պետք է դիտարկվեն վիճակագրական մարմինների կողմից օգտագործվող գործընթացներում՝ պաշտոնական վիճակագրությունը կազմակերպելու, հավաքագրելու, մշակելու և տարածելու համար: Վիճակագրության հանդեպ վստահությունն ամրապնդվում է լավ կառավարման և արդյունավետության համար հեղինակությամբ: Համապատասխան ասպեկտներն են՝ հիմնավորված մեթոդաբանությունը, համապատասխան վիճակագրական ընթացակարգերը, ռեսպոնդենտների ոչ ավելորդ ծանրաբեռնվածությունը և ծախսերի արդյունավետությունը:

Սկզբունք 7. Հիմնավորված մեթոդաբանություն

Հիմնավորված մեթոդաբանությունը վիճակագրության որակի հիմքն է: Այն պահանջում է համապատասխան գործիքներ, ընթացակարգեր և փորձ:

Ցուցանիշ 7.1. Եվրոպական վիճակագրության համար օգտագործվող ընդհանուր մեթոդաբանական շրջանակը հետևում է Եվրոպական և այլ միջազգային ստանդարտներին, ուղեցույցներին և լավագույն փորձերին:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Ստանդարտ մեթոդաբանական փաստաթուղթ:** Վիճակագրական գործընթացների իրականացման մեթոդաբանական շրջանակը և ընթացակարգերը ներառված են ստանդարտ մեթոդաբանական փաստաթղթում և պարբերաբար վերանայվում են:
2. **Միջազգային առաջարկություններից շեղման բացատրություն:** Գոյություն ունեցող Եվրոպական և միջազգային մեթոդաբանական առաջարկություններից շեղումը բացատրվում և հիմնավորվում է:

Ցուցանիշ 7.2. Ընթացակարգերն առկա են ապահովելու, որ ստանդարտ հասկացությունները, սահմանումները և դասակարգումները հետևողականորեն կիրառվեն վիճակագրական մարմինների կողմից:

1. **Հասկացություններ, սահմանումներ և դասակարգումներ:** Հասկացությունները, սահմանումները և դասակարգումները սահմանվում են վիճակագրական մարմնի կողմից, կիրառվում են Եվրոպական և/կամ ազգային օրենսդրությանը համապատասխան և փաստաթղթավորվում են:
2. **Մեթոդաբանական կազմակերպական կառուցվածք:** Մեթոդաբանական կազմակերպական կառուցվածքը (օրինակ՝ ստորաբաժանումներ, ցանցեր, հանձնաժողովներ) առկա է, որը սահմանում է վիճակագրական մեթոդները, մշտադիտարկում է դրանց իրականացումը և հաստատում արդյունքները: Մասնավորապես, այն սահմանում և մատչելի է դարձնում ստանդարտ գործիքներ բիզնես գործընթացի մոդելի յուրաքանչյուր փուլի համար (օրինակ՝ ընտրանք, տվյալների հավաքագրում և վերամշակում և այլն):

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

3. **Համապատասխան փորձագետների և սպառողների տեսակետները:** Հետազոտությունները կամ վիճակագրական գործընթացները անհրաժեշտության դեպքում օգտվում են համապատասխան փորձագետների և սպառողների տեսակետներից:
4. **Մեթոդաբանական փաստաթղթավորում:** Մեթոդաբանական փաստաթղթավորումը մշակվում է յուրաքանչյուր վիճակագրական գործընթացի համար պարունակելով ամբողջ առնչվող տեղեկատվությունը մեթատվյալների, մասնավորապես հասկացությունների, մեթոդների, դասակարգումների վերաբերյալ և հանրայնացնում է առնվազն ամփոփ ձևով:
5. **Մասնակցություն սեմինարներին և աշխատանքային հանդիպումներին:** Անձնակազմը ազգային կամ միջազգային մակարդակով մասնակցում է ստանդարտների, դասակարգումների կիրառման և այլ թեմաներով սեմինարների և աշխատանքային հանդիպումների:

Ցուցանիշ 7.3. Բիզնես ռեզիստորը և բնակչության հետազոտությունների շրջանակը, անհրաժեշտության դեպքում, պարբերաբար գնահատվում և ճշգրտվում են բարձր որակ ապահովելու համար:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

1. **Բիզնես ռեզիստորի արդիականացման ընթացակարգ:** Բիզնես ռեզիստորի համար կա արդիականացման ընթացակարգ ձեռնարկությունների համակցության մեջ բոլոր համապատասխան փոփոխությունների վերաբերյալ (այսինքն՝ գործունեության փոփոխություն, գործունեության սկիզբ, ավարտ, միավորումներ և ձեռքբերումներ և այլ կառուցվածքային փոփոխություններ, ինչպես նաև հիմնական փոփոխականների փոփոխություններ): Այս արդիականացումը շարունակաբար իրականացվում է:
2. **Բիզնես ռեզիստորի որակի գնահատում:** Բիզնես ռեզիստորը ենթարկվում է որակի վերաբերյալ կանոնավոր հետևողական հետազոտության և/կամ որակի ցուցանիշները հաշվարկվում և գնահատվում են:
3. **Տնային տնտեսությունների ռեզիստորի արդիականացման ընթացակարգ:** Տնային տնտեսությունների հետազոտությունների համար համապատասխան համակցության շրջանակը պարբերաբար և բավականաչափ հաճախ արդիականացվում է ընտրանքների որակը ապահովելու նպատակով:

4. **Հետազոտություններից ստացված արձագանքի օգտագործում:**
Հետազոտությունների իրականացման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը օգտագործվում է շրջանակի որակը, հատկապես դրա ընդգրկունությունը գնահատելու և բարելավելու համար:

Ցուցանիշ 7.4. Գոյություն ունի մանրամասն համապատասխանություն ազգային դասակարգումների ու համապատասխան Եվրոպական համակարգերի միջև:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

1. **Ազգային դասակարգումների համապատասխանություն:** Ազգային դասակարգումները համահունչ են համապատասխան Եվրոպական դասակարգման համակարգերի հետ:

2. **Համապատասխանության աղյուսակներ:** Համապատասխանության աղյուսակները փաստաթղթավորված և արդիականացված են: Բացատրական նշումները կամ մեկնաբանությունները հանրայնացվում են:

Ցուցանիշ 7.5. Համապատասխան գիտական առարկաներից շրջանավարտներ են հավաքագրվում:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Անձնակազմի հավաքագրում:** Վիճակագրական մարմնի անձնակազմը հավաքագրվում է բաց կերպով և համապատասխան առարկաներից համապատասխան որակավորումներով:
2. **Պաշտոնների համար որակավորման պահանջներ:** Բոլոր պաշտոնների համար սահմանված են համապատասխան որակավորման պահանջներ:

Ցուցանիշ 7.6. Վիճակագրական մարմինները իրենց անձնակազմի համար իրականացնում են շարունակական մասնագիտական ուսուցման քաղաքականություն:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Անձնակազմի ուսուցման քաղաքականություն:** Համապատասխան կառուցվածքը և կանոնավոր գործընթացները ապահովում են անձնակազմի շարունակական

մասնագիտական վերապատրաստումը, որն անբաժանելի մասն է մարդկային ռեսուրսների քաղաքականության մեջ:

2.Շարունակական մասնագիտական վերապատրաստում: Շարունակական մասնագիտական վերապատրաստումը խրախուսվում և գնահատվում է կարիերայի ճանապարհին:

3.Անձնակազմի հմտությունների արդիականացում: Անձնակազմի հմտություններն արդիականացվում են նոր գործիքների և ուսումնասիրության ոլորտների հետ կապված:

4. Անձնակազմի մասնակցությունը դասընթացներին: Համապատասխան ուսումնական դասընթացներին և / կամ ազգային, Եվրոպական կամ այլ միջազգային կոնֆերանսներին անձնակազմի մասնակցությունը խրախուսվում է:

Ցուցանիշ 7.7. Կազմակերպվում է համագործակցություն գիտական համայնքի հետ բարելավելու մեթոդաբանությունը և արտաքին վերանայում գնահատելու իրականացվող մեթոդների որակը և արդյունավետությունը ու նպաստելու առավել լավ գործիքներին, երբ հնարավոր է:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

- 1. Գիտական համայնքի հետ շփում:** Մեթոդաբանական, տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն զարգացումները քննարկելու նպատակով գիտական համայնքի հետ տեղի է ունենում պարբերաբար շփում, օրինակ՝ կոնֆերանսների, սեմինարների, աշխատանքային հանդիպումների միջոցով:
- 2. Համագործակցությունը գործընկերների հետ միջազգային մակարդակով:** Անձնակազմը մեթոդաբանական հարցերով համագործակցում է գործընկերների հետ միջազգային մակարդակով:
- 3. Կոնֆերանսներին մասնակցությունը և շնորհանդեսներ ներկայացնելը:** Գիտելիքների և փորձերի փոխանակման նպատակով խրախուսվում է համապատասխան (այսինքն, գիտական համայնքի անդամների ներկայությամբ) ազգային և միջազգային կոնֆերանսներին պարբերաբար մասնակցությունը և շնորհանդեսներ ներկայացնելը:
- 4. Կոնֆերանսների կազմակերպում:** Վիճակագրական մարմնի կողմից կազմակերպվում են ազգային և միջազգային կոնֆերանսներ, սեմինարներ, աշխատանքային հանդիպումներ կամ նմանատիպ միջոցառումներ գիտական համայնքի մասնակցությամբ: ԵՎՀ-ի վիճակագրական մարմինների մասնակցությունը ողջունելի է:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

5. **Արտաքին գնահատում:** Անհրաժեշտության դեպքում արտաքին փորձագետներից հայցվում են կիրառվող մեթոդների գնահատականներ/գնահատումները / աուդիտ:

Սկզբունք 8. Համապատասխան վիճակագրական ընթացակարգեր

Համապատասխան վիճակագրական ընթացակարգերը իրականացված՝ տվյալների հավաքագրումից մինչև տվյալների վավերացումը պետք է հիմք հանդիսանան վիճակագրության որակի համար:

Ցուցանիշ 8.1. Եթե Եվրոպական վիճակագրությունը հիմնված է վարչական տվյալների վրա, վարչական նպատակով օգտագործվող սահմանումները և հասկացությունները պետք է լավ մոտարկված լինեն դրանց, որոնք պահանջվում են վիճակագրական նպատակների համար:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Վարչական տվյալների վիճակագրական մշակման պատասխանատվություն:** Վիճակագրական մարմինը պատասխանատու է Եվրոպական վիճակագրության համար օգտագործվող վարչական տվյալների մշակման համար:
2. **Վիճակագրական և վարչական տվյալների մշակման միջև տարբերությունը:** Վիճակագրական մշակումը, ակնհայտորեն, տարբերվում է վարչական տվյալների մշակումից և ներառում է որակի ստուգման համար վավերացման համապատասխան կանոններ և հատուկ ընթացակարգեր: Երբ վարչական տվյալները օգտագործվում են վիճակագրական նպատակներով տվյալները մշակվում են հատուկ վիճակագրական օգտագործման համար: Սա կարող է նշանակել, նոր փոփոխականների ստացում, վավերացման և իմպուտացիայի տարբեր կանոնների կիրառում, նոր տվյալների ֆայլերի ստեղծում, կշիռների և նոր ամփոփ տվյալների հաշվարկ և որակի հատուկ ստուգումներ:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

3. **Վարչական և վիճակագրական գործընթացների փաստաթղթավորում:** Գոյություն ունի փաստաթղթավորում, որը նկարագրում է վարչական և վիճակագրական գործընթացների միջև տարբերությունները սահմանումների, հասկացությունների, ընդգրկունության և այլ տեսանկյունից:
4. **Հասկացություններում տարբերությունների ուսումնասիրություններ և դրանց դեմ պայքարելու միջոցներ:** Վիճակագրական և վարչական տվյալների միջև հասկացությունների տարբերությունները մանրակրկիտ ուսումնասիրվում են և անհրաժեշտության դեպքում միջոցներ են ձեռնարկվում դրանց դեմ պայքարելու:

Ցուցանիշ 8.2. Վիճակագրական հետազոտությունների դեպքում, հարցաթերթերը պարբերաբար փորձարկվում են մինչ տվյալների հավաքագրումը:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Հարցաթերթերը գնահատելու և վավերացնելու ընթացակարգ:** Առկա է հարցաթերթերը գնահատելու և վավերացնելու ընթացակարգ, որը ներգրավում է համապատասխան մասնագետների (օրինակ՝ վիճակագրական ոլորտում և հարցաթերթի մշակման գործում):

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

2. **Հարցաթերթի փորձարկում:** Նախքան տվյալների հավաքագրումը, հետազոտության հարցաթերթերը փորձարկվում են համապատասխան մեթոդներով (հարցաթերթի նախնական փորձարկում, փորձարկում իրական իրավիճակում, խորը հարցազրույցներ, ֆոկուսային խմբեր, հարցազրուցավարի աջակցություն և այլն): Պատասխանելու ժամանակը (հարցազրույցի տևողությունը) այս փուլում անհրաժեշտության դեպքում գնահատվում է:
3. **Փորձարկման արդյունքների օգտագործում:** Փորձարկման արդյունքները հաշվի են առնվում վերջնական հարցաթերթի իրականացման գործընթացում և փաստաթղթավորվում են հաշվետվության մեջ:

Ցուցանիշ 8.3. Հետազոտության կառուցվածքը, ընտրանքի ընտրությունները և գնահատման մեթոդները լավ հիմնավորված են և պարբերաբար վերանայվում, ստուգվում են, ինչպես պահանջվում է:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Ուղեցույցների, մեթոդաբանությունների և կիրառված մեթոդների ուսումնասիրության կազմակերպական կառուցվածք:** Համապատասխան կազմակերպական կառուցվածքը տրամադրում է ուղեցույցներ, առաջարկում է համապատասխան մեթոդաբանություններ և պարբերաբար ուսումնասիրում է հետազոտության ընտրանքի, ընտրանքի ընտրությունների համար կիրառված մեթոդները և գնահատման մեթոդները:
2. **Մեթոդների վերաբերյալ հաշվետվության ներկայացում հանրությանը:** Վիճակագրական մարմինը հրապարակավ հաղորդում է ընտրանքի ընտրության և գնահատման մեթոդների վերաբերյալ:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

3. **Հետազոտության կառուցվածքի և ընտրանքի ընտրությունների համապատասխանությունը ստանդարտների հետ:** Հետազոտության կառուցվածքը և ընտրանքի ընտրությունները մշակվում են ստանդարտ մեթոդներին համապատասխան:
4. **Ընտրանքի կառուցվածքների նորացում:** Ընտրանքի կառուցվածքները պարբերաբար նորացվում են կրկնվող հետազոտությունների համար:
5. **Ճշգրտության հաշվարկման համադրելի մեթոդներ:** Վիճակագրական տվյալների ճշգրտության գնահատման մեթոդները հնարավորություն են տալիս, որ Եվրոպական վիճակագրության ճշգրտությունը համադրելի լինի:
6. **Ընտրանքի ճշգրտության չափում և հաղորդում:** Ընտրանքի ճշգրտության հաշվարկները իրականացվում են պատշաճ կերպով և համապատասխանաբար հաղորդվում սպառողներին:
7. **Գնահատման մեջ կիրառվող մեթոդաբանական կանոններ:** Գնահատման մեթոդները, այդ թվում պատասխանի բացակայության շտկումը, տվյալների ստուգաճշտումը և սեզոնային ճշգրտումը հետևում են թափանցիկ մեթոդաբանական կանոնների:

Ցուցանիշ 8.4. Տվյալների հավաքագրումը, տվյալների մուտքագրումը և կողավորումը պարբերաբար վերահսկվում են և վերանայվում, ինչպես պահանջվում է:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Ուղեցույցների, մեթոդաբանությունների և կիրառված մեթոդների ուսումնասիրության կազմակերպական կառուցվածք:** Համապատասխան կազմակերպական կառուցվածքը տրամադրում է ուղեցույցներ, առաջարկում է համապատասխան մեթոդաբանություններ և պարբերաբար ուսումնասիրում է տվյալների հավաքագրման, տվյալների մուտքագրման և կոդավորման համար կիրառված մեթոդները:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

2. **Տվյալների հավաքագրման օպտիմալացում:** Տվյալների հավաքագրումը օպտիմիզացված է՝ ծախսերը և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու, ճշգրտությունը բարելավելու և ոչ ընտրանքային սխալները նվազեցնելու նպատակով:
3. **Ռեսպոնդենտներին փաստաթղթերի տրամադրում:** Ռեսպոնդենտներին հնարավորության դեպքում տրամադրվում են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը (օրինակ՝ նամակներ, հարցաթերթեր, բուկլետներ, հատկապես ինքնուրույն լրացվող հարցաթերթերի և հետադարձ կապի դեպքում:
4. **Տվյալների հավաքագրման տեխնիկաների մշտադիտարկում:** Տվյալների հավաքագրման տեխնիկաները պարբերաբար մշտադիտարկվում են:
5. **Ուսումնական դասընթացներ հարցազրուցավարների համար:** Հարցազրուցավարների համար կազմակերպվում են ուսումնական դասընթացներ: Յուրաքանչյուր հետազոտության համար գոյություն ունեն հարցազրուցավարի ձեռնարկ/ տեղեկագիրք և իրականացվում են հարցազրուցավարին ուղեկցող ընթացակարգեր:
6. **Պատասխանի բացակայության դեպքում հետամուտ լինելու ընթացակարգ:** Առկա են և իրականացվում են հետամուտ լինելու ընթացակարգեր պատասխանի բացակայության դեպքում:
7. **Տվյալների կոդավորման մեթոդներ:** Տվյալների կոդավորման մեթոդները փաստաթղթավորվում և պահպանվում են:
8. **Մեքենայացված կոդավորման մեթոդների վերանայում:** Մեքենայացված կոդավորման մեթոդները պարբերաբար վերանայվում և ստուգվում են, եթե անհրաժեշտ է:
9. **Տվյալների հավաքագրման և կոդավորման հետ կապված որակի ցուցանիշներ:** Տվյալների հավաքագրման և կոդավորման հետ կապված

որակի ցուցանիշներ արտադրվում և վերլուծվում են որակի ապահովման պլանին կամ ցանկացած այլ նմանատիպ սխեմային համապատասխան:

10. Աջակցություն ռեսպոնդենտներին: Հարցաթերթերը լրացնելիս ռեսպոնդենտներին ցուցաբերվում է աջակցություն (առցանց օգնություն, անվճար հեռախոսահամար, աջակցություն վիճակագիրների կողմից): Առկա են ռեսպոնդենտների հայցումներին և բողոքներին պատասխանելու ընթացակարգեր:

Ցուցանիշ 8.5. Համապատասխան խմբագրման և իմպուտացիայի մեթոդներ են օգտագործվում ու պարբերաբար վերանայվում, ստուգվում կամ արդիականացվում են, ինչպես պահանջվում է:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Ուղեցույցների, մեթոդաբանությունների և կիրառված մեթոդների ուսումնասիրության կազմակերպական կառուցվածք:** Համապատասխան կազմակերպական կառուցվածքը տրամադրում է ուղեցույցներ, առաջարկում է համապատասխան մեթոդաբանություններ և պարբերաբար ուսումնասիրում է խմբագրման և իմպուտացիայի մեթոդները:
2. **Խմբագրման և իմպուտացիոն ընթացակարգերի խրախուսում և տարածում:** Խմբագրման և իմպուտացիոն տեխնիկաների համար ընթացակարգերը խրախուսվում և տարածվում են դրանց ներդաշնակեցումը քաջալերելու նպատակով:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

1. **Խմբագրման և իմպուտացիայի վերլուծություն:** Խմբագրման և իմպուտացիայի ազդեցության վերլուծությունը իրականացվում է որպես տվյալների հավաքման և մշակման որակի գնահատման մի մաս:
2. **Խմբագրման և իմպուտացիայի տեխնիկաների համապատասխանությունը ստանդարտների հետ:** Խմբագրման և իմպուտացիայի տեխնիկաները հետևում են ստանդարտ մեթոդաբանական կանոններին և փաստաթղթավորվում են:

Ցուցանիշ 8.6. Վերանայումները հետևում են ստանդարտ, լավ հիմնված և թափանցիկ ընթացակարգերին:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Վերանայումների հետ կապված ուղեցույցներ և սկզբունքներ:** Գոյություն ունեն հրապարակված վիճակագրության վերանայմանն առնչվող ուղեցույցներ և սկզբունքներ, որոնք սովորաբար կիրառվում են և հայտնի են սպառողներին:
2. **Մեթոդաբանական բարելավումների խթանում:** Վերանայման ընթացակարգերի մեթոդաբանական բարելավումները խթանվում են կանոնավոր և մշտական գործողությունների միջոցով (օրինակ՝ հանձնաժողովները, հատուկ խմբերը, աշխատանքային խմբերը, սեմինարները մեթոդաբանության վերաբերյալ կամ փորձագիտական հանդիպումները, որոնք պատասխանատու են վերանայման ընթացակարգերը կատարելագործելու նպատակով մեթոդները պարբերաբար քննարկելու համար, ինքնագնահատումները, աուդիտները և այլն):

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

1. **Վերանայումների բացատրություն:** Վերանայումներն ուղեկցվում են բոլոր անհրաժեշտ բացատրություններով և հասանելի են սպառողներին:
2. **Վերանայումների որակի ցուցանիշներ:** Իրականացված վերանայումների որակի ցուցանիշները պարբերաբար հաշվարկվում են գործող ստանդարտներին համապատասխան և հայտնի են սպառողներին:

Ցուցանիշ 8.7. Վիճակագրական մարմինները ներգրավված են վարչական տվյալների մշակման գործում՝ վարչական տվյալները վիճակագրական նպատակներով առավել հարմար դարձնելու համար:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Վարչական տվյալների վերաբերյալ կանոնակարգերի / իրավական ակտերի մշտադիտարկման ընթացակարգ:** Առկա է վարչական տվյալների օգտագործման հետ կապված կանոնակարգերի/իրավական ակտերի փոփոխությունները մշտադիտարկելու ընթացակարգ:
2. **Խորհրդակցություն և վիճակագրական մարմնի ներգրավում:** Վիճակագրական մարմինը խորհրդակցում է, երբ վարչական ձևերը կամ ֆայլերը ստեղծվում, վերանայվում կամ ստուգվում են և ներգրավում է շարքերի

շարունակականությունը գնահատելու նպատակով կառուցվածքի փոփոխությունները կամ մշակումն իրականացնելիս:

3. **Վարչական աղբյուրների ներուժը ուսումնասիրելու ընթացակարգ:** Առկա է վիճակագրական նպատակներով մատչելի վարչական տվյալների աղբյուրներն ուսումնասիրելու ընթացակարգ:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

4. **Քննարկումներ և հանդիպումներ վարչական տվյալների սեփականատերերի հետ:** Պարբերաբար տեղի են ունենում վիճակագրական մարմնի և վարչական տվյալների սեփականատերերի միջև քննարկումներ կամ հանդիպումներ՝ վարչական տվյալներում (բովանդակություն, արտադրության գործընթաց և այլն) փոփոխությունների մասին տեղյակ պահելու նպատակով:

Ցուցանիշ 8.8: Վարչական տվյալների սեփականատերերի հետ կնքվում են պայմանագրեր, որտեղ սահմանվում է այդ տվյալները վիճակագրական նպատակներով օգտագործելու հետ կապված իրենց ընդհանուր պարտավորությունը:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Պայմանավորվածություններ վարչական տվյալների սեփականատերերի հետ:** Վիճակագրական մարմինների և վարչական տվյալների սեփականատերերի միջև ձեռք են բերվում պայմանավորվածություններ, որպեսզի դյուրինացվի վիճակագրական նպատակներով վարչական տվյալների օգտագործումը:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

2. Փաստաթղթավորում վարչական տվյալների վերաբերյալ: Վարչական տվյալների բովանդակության և տվյալների արտադրական գործընթացի (ինչպիսիք են՝ մեթոդաբանական փաստաթուղթը, հասկացությունները և սահմանումները և համակցությունները) վերաբերյալ փաստաթղթավորումը հասանելի է վիճակագրական մարմնին:

3. Համատեղ համաձայնագրեր վարչական տվյալների սեփականատերերի հետ: Վիճակագրական մարմնի և վարչական տվյալների սեփականատիրոջ կողմից համատեղ մշակվում են տվյալների անվտանգության, անհատական տվյալների ֆայլերի տրամադրման և տրամադրման ժամկետների վերաբերյալ համաձայնագրեր:

Ցուցանիշ 8.9: Վիճակագրական մարմինները համագործակցում են վարչական տվյալների սեփականատերերի հետ տվյալների որակի ապահովման հետ կապված:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Վարչական տվյալների սեփականատիրոջ իրազեկումը:** Վարչական տվյալների սեփականատերը տեղյակ է պահվում, թե ինչպես են վարչական տվյալներն օգտագործվում վիճակագրական նպատակներով, ինչպես նաև որակի հետ կապված հարցերի վերաբերյալ:
2. **Վարչական տվյալների որակի գնահատում:** Վիճակագրական մարմինը վստահեցնում է, որ վարչական տվյալների սեփականատերերի հետ ձեռք են բերվում պայմանավորվածություններ, երբ դա հնարավոր է, տրամադրում է վարչական տվյալների որակը գնահատելու գործիքներ՝ պահպանելով գաղտնիությունը:

Սկզբունք 9. Ռեսպոնդենտների ոչ ավելորդ ծանրաբեռնվածություն

Հաշվետվական ծանրաբեռնվածությունը համեմատական է սպառողների կարիքներին և չափազանցված չէ ռեսպոնդենտների համար: Վիճակագրական մարմինն իրականացնում է ծանրաբեռնվածության մշտադիտարկում և սահմանում է թիրախներ դրա նվազեցման համար ժամանակի ընթացքում:

Սկզբունք 9.1: Եվրոպական վիճակագրության տեսակների և մանրամասնության պահանջները սահմանափակվում են այնքանով, ինչը բացարձակապես անհրաժեշտ է:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Եվրոպական վիճակագրության համար գերակայությունները:** Եվրոպական վիճակագրության համար գերակայությունները սահմանվում են ԵՎՀ-ի մակարդակով՝ հաշվի առնելով ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը:
2. **Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության և մանրամասնեցվածության մակարդակի ստուգում:** Եվրոպական վիճակագրության վերաբերյալ ԵՄ կանոնակարգերի վերլուծությունն իրականացվում է, որպեսզի ստուգվի ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը և կանոնակարգերով նախատեսված փոփոխականների մանրամասնեցվածության մակարդակը:

3. **Վիճակագրական աշխատանքների ծրագրի գնահատում:** Վիճակագրական աշխատանքների ծրագրի բովանդակությունը գնահատվում է վիճակագրական մարմնում կրկնօրինակումը և ավելորդ կրկնությունը վերացնելու նպատակով:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

4. **Վիճակագրական տեղեկատվության կարիքների վերլուծություն:**
Վիճակագրական տեղեկատվության Եվրոպական և ազգային պահանջները և ըստ ոլորտի մանրամասնեցվածության մակարդակը վերլուծվում են:
5. **Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափում:** Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը պարբերաբար և ստանդարտացված եղանակով չափվում է:
6. **Հավաքագրված յուրաքանչյուր փոփոխականի հիմնավորում:** Յուրաքանչյուր հավաքագրված փոփոխական պատշաճ կերպով հիմնավորվում է:
7. **Տվյալների այլընտրանքային աղբյուրների ուսումնասիրություն:** Տվյալների հավաքագրումը նվազագույնի հասցնելու նպատակով հստակ դիտարկվում են տվյալների այլընտրանքային աղբյուրները, այդ թվում իրականացվող հետազոտության և վարչական տվյալների առկայությունը և համապատասխանությունը:

Ցուցանիշ 9.2: Հաշվետվական ծանրաբեռնվածությունը հնարավորինս լայնորեն տարածվում է հետազոտությունների համակցությունների վրա:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Հաշվետվական ծանրաբեռնվածության վերանայումներ:** Կանոնավոր կերպով ձեռնարկվում են հաշվետվական ծանրաբեռնվածության վերանայումներ:
2. **Գործողությունների պլաններ պարզեցման/մոդերնիզացիայի համար:** Պարզեցման/մոդերնիզացիայի համար գործողությունների պլաններ են մշակվում, իրականացվում և մշտադիտարկվում ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով:
3. **Հաշվետվական ծանրաբեռնվածության արդյունավետության ցուցանիշներ:** Հաշվետվական ծանրաբեռնվածության արդյունավետության ցուցանիշները պարբերաբար արտադրվում և վերլուծվում են ղեկավարության կողմից:
4. **Վիճակագրական ընտրանքի մեթոդների օգտագործում:** Վիճակագրական ընտրանքի մեթոդներն օգտագործվում են ապահովելու, որ հաշվետվական

ծանրաբեռնվածությունը անհարկի չընկնի ռեսպոնդենտների որոշակի կատեգորիաների վրա:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

- 5. Հաշվետվական ծանրաբեռնվածության կրճատում:** Հաշվետվական ծանրաբեռնվածությունը կրճատվում է համապատասխան ընտրանքի ձևավորման միջոցով, օգտագործելով օրինակ՝ համակարգված ընտրանքի մեթոդը:
- 6. Հաշվետվական ծանրաբեռնվածության հաշվարկ:** Հաշվետվական ծանրաբեռնվածությունը հաշվարկվում է հարցաթերթին պատասխանելու համար անհրաժեշտ ժամանակի ընթացքում՝ պահանջվող տեղեկատվությունը ստանալու, ներքին կամ արտաքին փորձառություն ձեռք բերելու և կարևոր տեղեկատվության մշակման համար:
- 7. Հարցերի սահմանափակումներ:** Հարցերը, որոնք օգտագործվում են հավաքագրելու այն տեղեկատվությունը, որը չի հրապարակվելու սահմանափակվում և հիմնավորվում են:

Ցուցանիշ 9.3: Ձեռնարկություններից հայցվող տեղեկատվությունը, ինչը մատչելի է իրենց հաշիվներից և էլեկտրոնային միջոցները, որքան հնարավոր է օգտագործվում են, դյուրին դարձնելու դրա փոխանցումը:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

- 1. Ձեռնարկներ և տեխնիկական գործիքներ:** Մշակվում են ձեռնարկներ և տեխնիկական գործիքներ (օրինակ՝ ծրագրային ապահովում), տվյալների հավաքագրման համար էլեկտրոնային միջոցների օգտագործումը ընդլայնելու նպատակով:
- 2. Տվյալների էլեկտրոնային հավաքագրման պլան ձեռնարկությունների համար:** Գոյություն ունի ձեռնարկությունների համար տվյալների էլեկտրոնային հավաքագրումն իրականացնելու կամ ներդնելու պլան:
- 3. Ձեռնարկության տվյալների հավաքագրման համար կայք:** Ձեռնարկությունների տվյալների հավաքագրման համար առկա է ընդհանուր կայք:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

4. **Ձեռնարկության հաշվապահական հասկացությունների և SS համակարգերի օգտագործում:** Ձեռնարկության հաշվապահական հասկացությունները և ստանդարտացված SS համակարգերը, ինչպիսին է XBRL-ը օգտագործվում են ձեռնարկություններից տվյալների հավաքագրումների ընթացքում:
5. **Ձեռնարկության հաշվապահական համակարգերից տվյալներ ստանալու մեթոդներ:** Առկա են ձեռնարկության հաշվապահական համակարգերից ուղղակիորեն տվյալներ ստանալու ծրագրային ապահովման մեթոդներ:
6. **Համագործակցություն գործարար համայնքի հետ:** Հետազոտության ղեկավարները աշխատում են գործարար համայնքի հետ միասին, որպեսզի համապատասխան լուծումներ գտնեն տեղեկատվություն ստանալու պոտենցիալ դժվարությունների վերաբերյալ:
7. **Ձեռնարկությունների իրազեկում հետազոտության արդյունքների վերաբերյալ:** Հետազոտություններում իրենց մասնակցության համար շնորհակալություն ստանալու և վիճակագրական համակարգում իրենց կարևորությունը խթանելու նպատակով ձեռնարկությունները տեղյակ են պահվում հետազոտությունների արդյունքների վերաբերյալ:

Ցուցանիշ 9.4: Վարչական աղբյուրներն օգտագործվում են, երբ հնարավոր է խուսափելու տեղեկատվության համար կրկնվող հարցումներից:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Վարչական աղբյուրների օգտագործումը ընդլայնելու գործիքներ:** Եվրոպական համագործակցային ցանցերը մշակում են վարչական աղբյուրների օգտագործումը ընդլայնելու գործիքներ:
2. **Վարչական աղբյուրները ուսումնասիրելու և օգտագործելու պլաններ:** Ազգային մակարդակով մշակվում են պլանավորման գործողություններ, որպեսզի վարչական աղբյուրները ուսումնասիրվեն և օգտագործվեն վիճակագրական կարիքների համար (օրինակ՝ համապատասխան պայմանավորվածություններ, մոդուլների մշակում, որոնք կօգտագործվեն համակարգված ձևով ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու /սահմանափակելու նպատակով, ազգային օրենսդրություն կամ համաձայնագրեր, եթե անհրաժեշտ է):
3. **Վարչական տվյալներ տրամադրելու իրավական պարտավորություն:** Օրինական մուտք է ապահովվում վարչական աղբյուրներ և վարչական

մարմինները պարտավորություն ունեն տրամադրելու վարչական տվյալները, եթե դրանք հայցվում են:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

4. **Վարչական աղբյուրների առկայության և որակի վերաբերյալ ուղեցույց:** Հետազոտության ղեկավարների համար առկա է վարչական աղբյուրների առկայության և որակի վերաբերյալ ուղեցույց:
5. **Վարչական տվյալների հավաքագրման համար ծրագրեր:** Վիճակագրական նպատակով օգտագործվելիք վարչական տվյալների հավաքագրման համար մշակվում և իրականացվում են ծրագրեր:

Ցուցանիշ 9.5: Տվյալների փոխանակումը վիճակագրական մարմիններում ընդհանրացվում է խուսափելու հետազոտությունների բազմապատկումից:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Տվյալների փոխանակման տեխնիկական գործիքներ:** Գոյություն ունեն ազգային վիճակագրական համակարգի ներքո տվյալների փոխանակման տեխնիկական գործիքներ (օրինակ՝ պաշտոնական համաձայնագրեր, վեբ ծառայություններ, ընդհանուր տվյալների բազաներ):

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

2. **Տվյալների համար պահոցների փաստաթղթավորում:** Գոյություն ունի արտադրության և արխիվացված տվյալների պահոցների փաստաթղթավորում:
3. **Տվյալների արխիվների տրամադրում:** Տվյալների արխիվները տրամադրվում են վիճակագրական մարմինների ներքո, երբ օգտակար են և գաղտնիության քաղաքականություններին համապատասխան:

Ցուցանիշ 9.6: Վիճակագրական մարմինները միջոցներ են ձեռնարկում, որոնք հնարավորություն կտան շաղկապելու տվյալների աղբյուրները՝ հաշվետվական ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Տրամադրելու ենթակա հիմնական փոփոխականներ:** Վիճակագրական մարմինը սահմանում է հիմնական փոփոխականներ, որոնք պետք է բաշխվեն վիճակագրական գործընթացների միջև գաղտնիության կանոններին համապատասխան:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

2. **Տվյալների ֆայլի կառուցվածքների և փոխանցման ձևաչափերի վերաբերյալ փաստաթղթավորում:** Առկա է փաստաթղթավորում տվյալների ֆայլի կառուցվածքների և փոխանցման ձևաչափերի վերաբերյալ, որոնք պահանջվում են տվյալների աղբյուրներին հղելու նպատակով:

Սկզբունք 10. Ծախսերի արդյունավետություն

Ռեսուրսներն օգտագործվում են արդյունավետ:

Ցուցանիշ 10.1: Ներքին և անկախ արտաքին միջոցները վերահսկում են վիճակագրական մարմնի ռեսուրսների օգտագործումը:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Մարդկային և ֆինանսական ռեսուրսների մշտադիտարկման և հաշվետվողականության ցուցանիշներ:** Մարդկային և ֆինանսական ռեսուրսների ցուցանիշները կենտրոնացված մշտադիտարկվում են և պարբերաբար զեկուցվում ղեկավարությանը:
2. **Վիճակագրական գործընթացների համար ռեսուրսների հատկացում:** Հաշվապահական համակարգերը հնարավորություն են տալիս հատկացնել ռեսուրսներ վիճակագրական գործընթացների համար:
3. **Մարդկային ռեսուրսների գնահատում:** Մարդկային ռեսուրսները տարեկան գնահատվում են գրասենյակի ուղեցույցներին համահունչ: Գնահատումը ընդգրկում է անձնակազմի բաշխման, աշխատանքային և ուսուցման կարիքները:
4. **Անձնակազմի կարծիքի հետազոտություններ:** Պարբերաբար իրականացվում են անձնակազմի կարծիքի հետազոտություններ:
5. **SS ենթակառուցվածքի վերանայում:** SS ենթակառուցվածքը պարբերաբար վերանայվում է:

6. Ակնկալվող ծախսերը հաշվարկելու ընթացակարգեր: Առկա են վիճակագրական գործընթացների համար ակնկալվող ծախսը հաշվարկելու ընթացակարգեր:

Ցուցանիշ 10.2: Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների արտադրողականության ներուժն օպտիմիզացված է տվյալների հավաքման, մշակման և տարածման համար:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. Ռեսուրսների միավորում, ներդրումներ և նորարարության / մոդերնիզացիայի ներուժի բացահայտում: Կենտրոնացված SS և մեթոդաբանական ստորաբաժանումները ապահովում են ռեսուրսների միավորումը, ներդրումները և նորարարության / մոդերնիզացիայի ներուժի բացահայտումը:
2. SS ճարտարապետություն և ռազմավարություն: Առկա է համապատասխան SS ճարտարապետություն և ռազմավարություն և պարբերաբար արդիականացվում է:
3. Մեքենայական մշակման տեխնիկաները խթանող քաղաքականություններ, ընթացակարգեր և գործիքներ: Առկա են տվյալների հավաքագրման, տվյալների կոդավորման և վավերացման համար մեքենայական մշակման տեխնիկաները խթանող քաղաքականություններ, ընթացակարգեր և գործիքներ:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

4. Մեքենայացված վերամշակման տեխնիկայի օգտագործման վերանայում: Մեքենայացված վերամշակման տեխնիկայի օգտագործումը պարբերաբար վերանայվում է:

Ցուցանիշ 10.3: Ակտիվ ջանքեր են գործադրվում բարելավելու վարչական տվյալների վիճակագրական ներուժը և սահմանափակելու ուղղակի հետազոտությունները:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. Համաձայնագրեր վարչական տվյալների սեփականատերերի հետ: Համապատասխան համաձայնագրեր են ստորագրվում վարչական տվյալների սեփականատերերի հետ (օրինակ, ծառայության մակարդակի

պայմանագրեր կամ ազգային օրենսդրություն) և պարբերաբար արդիականացվում են: Վիճակագրական մարմինը փորձում է ներգրավվել վարչական տվյալների հահավաքագրումների կազմակերպման մեջ:

2. **Վարչական տվյալների հնարավոր աղբյուրների գնահատում:** Վարչական տվյալների հնարավոր աղբյուրների գնահատումը իրականացվում է մինչ որևէ նոր հետազոտություն սկսելը:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

3. **Տվյալների կապակցման և ինտեգրման մեթոդներ:** Տվյալների կապակցման և ինտեգրման մեթոդները ակտիվորեն հետևվում են հաշվի առնելով տվյալների անվտանգության նկատառումները:
4. **Վարչական տվյալների օգտագործումը բարելավելու որակի ցուցանիշներ:** Որակի ցուցանիշները մշակվել և կազմել են վիճակագրական նպատակով վարչական տվյալների օգտագործման մեթոդները կատարելագործելու նպատակով:

Ցուցանիշ 10.4: Վիճակագրական մարմինները խթանում և իրականացնում են ստանդարտացված լուծումներ՝ արդյունավետությունը և էֆեկտիվությունը բարձրացնելու համար:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Վիճակագրական գործընթացների համար ստանդարտացման ծրագրեր և ընթացակարգեր:** Ստանդարտացման ծրագրերը և ընթացակարգերը սահմանվում և իրականացվում են վիճակագրական արտադրության ոլորտների հիմնական փուլերում, օրինակ՝ ընտրանք, ռեգիստրներ, տվյալների հավաքագրում և տվյալների փոխանակում՝ բիզնես գործընթացների մոդելին համապատասխան:
2. **Ստանդարտների ընդունման կամ մշակման ռազմավարություն:** Առկա է տարբեր ոլորտներում ստանդարտների ընդունման կամ մշակման ռազմավարություն, օրինակ՝ որակի կառավարում, գործընթացների մոդելավորում, ծրագրային ապահովման մշակում, ծրագրային ապահովման գործիքներ, նախագծի կառավարում և փաստաթղթային կառավարում:
3. **Հայտարարություն մեթոդաբանական փաստաթղթերում:** Հայտարարությունը, որը բացատրում է քայլերը, որոնք ձեռնարկվել են աստիճանաբար առաջ շարժվելու կամ ստանդարտացմանը համապատասխանելու ուղղությամբ,

տեղեկատվական մեթատվյալների մասն է հանդիսանում (օրինակ, որակի հաշվետվություններ):

Վիճակագրական արտադրանք

Առկա վիճակագրությունը բավարարում է սպառողների պահանջները: Վիճակագրությունը համապատասխանում է Եվրոպական որակի ստանդարտներին և ծառայում է Եվրոպական հաստատությունների, կառավարությունների, հետազոտական հաստատությունների, գործարար ընկերությունների և ընդհանրապես հասարակության կարիքներին: Կարևոր հարցեր են, թե որքանով է վիճակագրությունը համապատասխան, ճշգրիտ և արժանահավատ, ժամանակին, համաձայնեցված, համադրելի տարածաշրջաններում և երկրներում ու հեշտությամբ մատչելի սպառողներին:

Սկզբունք 11. Համապատասխանություն.

Եվրոպական վիճակագրությունը բավարարում է սպառողների պահանջները:

Ցուցանիշ 11.1: Գործընթացներն առկա են խորհրդակցելու սպառողների հետ, նրանց պահանջները բավարարելու համար առկա վիճակագրության համապատասխանությունը և օգտակարությունը վերահսկելու և ուսումնասիրելու նրանց զարգացող կարիքների և առաջնահերթությունները:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

- 1. Սպառողների հետ խորհրդակցելու վերաբերյալ օրենսդրություն:**
Վիճակագրական օրենքները (ազգային և եվրոպական) ներառում են սպառողների հետ խորհրդակցելու պարտավորություն:
- 2. Սպառողների հետ խորհրդակցելու գործունեություններ:** Սպառողների հետ խորհրդակցելու նպատակով պարբերաբար և կառուցվածքային գործունեությունները, այդ թվում, օրինակ, սպառողների հանձնաժողովն առկա են՝ ուշադրությունը կենտրոնացնելու ինչպես վիճակագրական ծրագրի բովանդակության, այնպես էլ վիճակագրության արտադրանքի որակի վրա:
- 3. Վիճակագրության օգտագործման վերաբերյալ տվյալների վերլուծություն:**
Վիճակագրության օգտագործման վերաբերյալ տվյալները (օրինակ՝ ներբեռնումների գնահատում, հաշվետվությունների բաժանորդներ) վերլուծվում են առաջնահերթությունը սահմանելու և սպառողների հետ խորհրդակցելու աշխատանքներին նպաստելու նպատակով:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

4. **Սպառողների դասակարգում:** Տվյալ արտադրանքի սպառողների դասակարգումը պարբերաբար արդիականացվում և հասանելի է դարձվում:
5. **Հիմնական սպառողների և նրանց օգտագործած տվյալների ցանկը:** Հիմնական սպառողների և նրանց օգտագործած տվյալների ցանկը, այդ թվում, սպառողների չբավարարված կարիքների ցանկը պարբերաբար արդիականացվում և հասանելի է դարձվում:
6. **Սպառողների խորհրդատվական ընթացակարգեր:** Առկա են վիճակագրության վերաբերյալ սպառողների խորհրդատվական ընթացակարգեր:
7. **Համապատասխանության չափում և գնահատում:** Համապատասխանության վերաբերյալ որակի ցուցանիշները պարբերաբար գնահատվում են:

Ցուցանիշ 11.2: Առաջնահերթ կարիքները բավարարվում և արտացոլվում են աշխատանքային ծրագրում:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Աշխատանքային ծրագրի առաջնահերթությունները:** Իրականացվում են ընթացակարգեր աշխատանքային ծրագրում սահմանելու տարբեր սպառողների պահանջներն ըստ առաջնահերթությունների:
2. **Ռազմավարական նպատակներ և ծրագրային պլաններ:** Ռազմավարական նպատակները և ծրագրային պլանները պարբերաբար մշակվում և հրապարակվում են: Սպառողների պահանջները հաշվի են առնվում ծախս/շահ նկատառումներից ելնելով:
3. **Համաձայնագրեր կարևորագույն սպառողների հետ:** Վիճակագրական մարմինների կողմից մատուցվող ծառայության պայմանները (օրինակ՝ տրամադրված վիճակագրական տեղեկատվության և տեղեկատվության որակի որոշ ասպեկտների նկարագրություն, ինչպիսիք են՝ իրենց ժամկետայնությունը, ճշգրտությունը, տվյալների փոխանակման ձևաչափը, օգտագործման պայմանները) սահմանող ծառայության մակարդակով համաձայնագրեր կամ նմանատիպ պայմանավորվածություններ են ձեռք բերվում կարևորագույն սպառողների հետ:
4. **Աշխատանքային ծրագրի գնահատում:** Պարբերաբար իրականացվում է աշխատանքային ծրագրի գնահատում՝ բացասական առաջնահերթությունները և առաջացող պահանջները բացահայտելու նպատակով:

Ցուցանիշ 11.3: Սպառողների բավարարվածությունը վերահսկվում է կանոնավոր հիմքով և սիստեմատիկորեն ուսումնասիրվում է:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Սպառողների բավարարվածության հետազոտություններ:** Սպառողների բավարարվածության հետազոտությունները (ներառյալ օրինակ սպառողների բավարարվածության վերաբերյալ որակի ցուցանիշների կազմելը) կամ սպառողների նմանատիպ ուսումնասիրությունները պարբերաբար իրականացվում և գնահատվում են գրասենյակի ամբողջ մասշտաբով:
2. **Սպառողների բավարարվածության հետազոտություններից բխող բարելավման գործողություններ:** Սպառողների բավարարվածության հետազոտություններից բխող բարելավման գործողությունները սահմանվում և պլանավորվում են իրականացման համար:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

3. **Հիմնական սպառողների բավարարվածության գնահատում:** Միջոցներ են ձեռնարկվում որոշ արտադրանքների վերաբերյալ հիմնական սպառողների բավարարվածությունը գնահատելու համար (օրինակ՝ հատուկ սպառողների բավարարվածության հետազոտություն/ցուցանիշներ արտադրանքի մակարդակով): Գնահատման արդյունքները հրապարակվում են, օրինակ որակի հաշվետվություններում:

Սկզբունք 12. Ճշգրտություն և արժանահավատություն

Եվրոպական վիճակագրությունը ճշգրիտ և արժանահավատ նկարագրում է իրականությունը:

Ցուցանիշ 12.1: Սկզբնական տվյալները, միջանկյալ արդյունքները և վիճակագրական արտադրանքները գնահատվում և հաստատվում են:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Տվյալների գնահատման և վավերականացման համակարգեր:** Սկզբնական տվյալների, միջանկյալ արդյունքների և վիճակագրական արտադրանքների

գնահատման և վավերականացման համակարգերը մշակվում, իրականացվում և կառավարվում են:

2. **Տվյալների որակի գնահատման ընթացակարգեր և ուղեցույցներ:** Գոյություն ունեն որակի գնահատման ներքին ընթացակարգեր և ուղեցույցներ և լուծում են ճշգրտության և արժանահավատության հետ կապված հարցեր:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

3. **Արդյունքների համեմատությունը այլ աղբյուրների հետ:** Վավերականությունը ապահովելու նպատակով արդյունքները համեմատվում են այլ առկա տեղեկատվության աղբյուրների հետ:

Ցուցանիշ 12.2: Ընտրանքային և ոչ-ընտրանքային սխալները չափվում են ու սխստեմատիկաբար փաստաթղթավորվում համաձայն Եվրոպական ստանդարտների:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Սխալների չափման և նվազեցման ընթացակարգեր և ուղեցույցներ:** Առկա են սխալների չափման և նվազեցման ներքին ընթացակարգեր և ուղեցույցներ և կարող են ընդգրկել այնպիսի գործունեություններ, ինչպիսիք են՝
 - Առանցքային փոփոխականների սխալների հիմնական աղբյուրների բացահայտում;
 - Առանցքային փոփոխականների համար ընտրանքային սխալների քանակավորում;
 - Վիճակագրական գործընթացներում ոչ-ընտրանքային հիմնական սխալների բացահայտում և գնահատում;
 - Հնարավոր շեղումների քանակական կամ որակական առումով բացահայտում և գնահատում;
 - Հատուկ ուշադրություն սահմանից դուրս ցուցանիշներին /outliers/, ինչպես նաև դրանց մշակում գնահատման մեջ;
 - Ընդգրկման հնարավոր սխալների քանակավորում;
 - Չափման հնարավոր սխալների քանակավորում (առկա տեղեկատվությունների համեմատություն, հարցաթերթի նախագծում և փորձարկում, տեղեկատվություն հարցազրուցավարների վերապատրաստման վերաբերյալ և այլն);

- Պատասխան չներկայացնելու հետ կապված սխալների քանակավորում, ներառյալ գնահատման փուլում պատասխան չներկայացնելու դեպքերի տեխնիկական մշակման համար համակարգված փաստաթղթավորումը և ներկայացուցչականության ցուցանիշները:
- Մշակման սխալների քանակավորում;
- Նախնական և վերանայված հաշվարկների միջև տարբերությունների վերլուծություն :

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

2. **Ճշգրտության վերաբերյալ որակի հաշվետվողականություն:** Առկա է ճշգրտության վերաբերյալ պարբերական հաշվետվողականություն (որը բխում է արտադրողի և սպառողի շահերից):
3. **ԵՎՀ առաջարկությունները որակի հաշվետվությունների վերաբերյալ:** Ճշգրտության վերաբերյալ որակի հաշվետվություններն առաջնորդվում են ԵՎՀ-ի առաջարկություններով, օրինակ՝ որակի հաշվետվությունների համար ԵՎՀ ձեռնարկով:
4. **Սխալները կանխելու և նվազեցնելու մեթոդներ և գործիքներ:** Առկա են ընտրանքային և ոչ-ընտրանքային սխալները կանխելու և նվազեցնելու մեթոդներ և գործիքներ:

Ցուցանիշ 12.3: Վերանայումները պարբերաբար վերլուծվում են վիճակագրական գործընթացները կատարելագործելու նպատակով:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Վերանայման քաղաքականություն:** Սկզբունքներն ու ընթացակարգերը սահմանող վերանայման քաղաքականությունը շարադրված է գրավոր և հանրայնացված է Եվրոպական պահանջներին համապատասխան:
2. **Բացատրություններ վերանայումների վերաբերյալ:** Վերանայումների ժամկետները, դրանց պատճառները և բնույթը բացատրվում են հրապարակավ:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

3. **Վերանայման քաղաքականության համապատասխանությունը ստանդարտ ընթացակարգերի հետ:** Վերանայման քաղաքականությունը յուրաքանչյուր

հետազոտության համատեքստում հետևում է ստանդարտ և թափանցիկ ընթացակարգերի:

4. **Տեղեկատվություն հիմնական ցուցանիշների վերանայումների չափի և ուղղության վերաբերյալ:** Հիմնական ցուցանիշների վերանայումների չափի և ուղղության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում և հանրայնացվում է:
5. **Վերանայումների վերլուծության օգտագործում:** Վերանայումների կանոնավոր վերլուծությունը օգտագործվում է վիճակագրական գործընթացը բարելավելու նպատակով, հաշվի առնելով քաղված դասերը արտադրության ցիկլը կարգավորելու համար:

Սկզբունք 13. Յուրաժամանակություն և ճշտապահություն

Եվրոպական վիճակագրությունը թողարկվում է ժամանակին և ճշտապահորեն:

Ցուցանիշ 13.1 Յուրաժամանակությունը բավարարում է Եվրոպական և այլ միջազգային թողարկման ստանդարտներին:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Համապատասխանությունը յուրաժամանակության վերաբերյալ միջազգային ստանդարտների հետ:** Առկա է համապատասխանություն յուրաժամանակության վերաբերյալ միջազգային ստանդարտների հետ:
2. **Թողարկման օրացույցի հրապարակում:** Թողարկման օրացույցը հրապարակվում է ընդգրկելով ամբողջ վիճակագրությունը, որի համար յուրաժամանակության ստանդարտները սահմանված են Եվրոպական կանոնակարգերով կամ միջազգային մակարդակի պայմանագրերով:
3. **Յուրաժամանակության նպատակներից շեղումները դիտարկելու և հետամուտ լինելու ընթացակարգ:** Եվրոպական և միջազգային յուրաժամանակության նպատակներից շեղումները պարբերաբար դիտարկվում են և գործողությունների պլան է մշակվում, եթե այդ նպատակները չեն իրականացվում:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

4. **Յուրաժամանակության վերաբերյալ որակի ցուցանիշը (ները):** Յուրաժամանակության վերաբերյալ որակի ցուցանիշը (ները) պարբերաբար հաշվարկվում և հրապարակվում է (են):

5. **Յուրաժամանակության վերաբերյալ որակի ցուցանիշի (ների) վերլուծություն և գնահատում:** Յուրաժամանակության վերաբերյալ որակի ցուցանիշը (ները) անհրաժեշտության դեպքում պարբերաբար վերլուծվում և գնահատվում է (են) վիճակագրական գործընթացը բարելավելու նպատակով:

Ցուցանիշ 13.2: Եվրոպական վիճակագրության թողարկման համար ստանդարտ օրվա ժամը հանրայնացվում է:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Թողարկման քաղաքականություն:** Թողարկման քաղաքականությունը սահմանվում և հրապարակվում է: Թողարկման քաղաքականությունը տարբերակում է տարբեր տեսակի հրապարակումներ՝ (օրինակ՝ մամուլի հաղորդագրություններ, վիճակագրական հատուկ զեկույցներ/աղյուսակներ, ընդհանուր հրապարակումներ) և դրանց համապատասխան թողարկման ընթացակարգեր:

2. **Հրապարակում ստանդարտ օրվա ժամին:** Թողարկումները հրապարակվում են ստանդարտ օրվա ժամին:

Ցուցանիշ 13.3: Վիճակագրության պարբերականությունը հնարավորինս հաշվի է առնում սպառողի պահանջները:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Սպառողների հետ խորհրդակցություն պարբերականության վերաբերյալ:** Վիճակագրական մարմինը կանոնավոր կերպով խորհրդակցում է սպառողների հետ պարբերականության վերաբերյալ:

Ցուցանիշ 13.4: Տարածման ժամանակացույցից շեղումը նախօրոք հրապարակվում է, բացատրվում և սահմանվում է թողարկման նոր ամսաթիվ:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Թողարկման օրացույցի հրապարակում:** Թողարկման օրացույցը պարբերաբար հրապարակվում է:
2. **Ճշտապահությունը վերահսկելու և գնահատելու ընթացակարգ:** Յուրաքանչյուր թողարկման ճշտապահությունը պարբերաբար վերահսկվում և գնահատվում է:
3. **Նախապես հայտարարված ժամկետից շեղումների, շեղման պատճառների և թողարկման նոր ժամկետի հրապարակում:** Նախապես հայտարարված

Ժամկետից շեղումները հրապարակվում են նախօրոք, պատճառները բացատրվում են և հայտարարվում է թողարկման նոր ժամկետը:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

Ցուցանիշ 13.5: Ընդունելի ագրեզացված ճշգրտության նախնական արդյունքները կարող են թողարկվել այն ժամանակ, երբ համարվում են օգտակար:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

1. **Նախնական արդյունքների տարածման հնարավորության վերանայում:** Նախնական արդյունքների տարածման հնարավորությունը պարբերաբար վերանայվում է, հաշվի առնելով տվյալների ճշգրտությունը:
2. **Հաշվետվություն նախնական արդյունքների որակի վերաբերյալ:** Երբ նախնական արդյունքները թողարկվում են, սպառողին տրամադրվում է համապատասխան տեղեկատվություն հրապարակված արդյունքների որակի մասին:
3. **Պլանավորված վերանայումների քաղաքականություն:** Հիմնական արտադրանքները կամ հիմնական արտադրանքների խմբերը, որոնք ենթակա են պլանավորված վերանայումների ունեն այդ վերանայումները ընդգրկող հրապարակված քաղաքականություն:

Սկզբունք 14. Համաձայնեցվածություն և համադրելիություն

Եվրոպական վիճակագրությունը հետևողական է ներքուստ և ժամանակի ընթացքում ու համադրելի տարածաշրջանների և երկրների միջև; հնարավոր է համատեղել և համատեղ օգտագործել համապատասխան տվյալներ տարբեր աղբյուրներից:

Ցուցանիշ 14.1: Վիճակագրությունը ներքուստ համաձայնեցված է և հետևողական (օրինակ, դիտարկվում են թվաբանական և հաշվապահական նույնականացումները):

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Ներքին համաձայնեցվածությունը դիտարկելու ընթացակարգեր և ուղեցույցներ:** Ներքին համաձայնեցվածությունը դիտարկելու ընթացակարգերը և ուղեցույցները մշակվում և իրականացվում են համակարգված կերպով: Անհրաժեշտության դեպքում, դրանք կառնչվեն նախնական և վերջնական տվյալների (օրինակ, շարունակականությունը)

միկրոտվյալների և ագրեգացված տվյալների, տարեկան, եռամսյակային և ամսական տվյալների, վիճակագրության և ազգային հաշիվների միջև համաձայնեցվածությանը, ինչպես նաև ոչ-դետերմինիստական համաձայնեցվածությանը (օրինակ, տնտեսական աճի և զբաղվածության միջև համաձայնեցվածություն, նաև կոչվում է հավաստիություն):

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

2. **Հավելյալ աղբյուրներից արտադրանքների համակցությունն ապահովելու ընթացակարգեր և ուղեցույցներ:** Գործընթացի հատուկ ընթացակարգերը և ուղեցույցները երաշխավորում են, որ հավելյալ աղբյուրներից ստացված արտադրանքները համակցված են, ներքին համաձայնեցվածությունն ու հետևողականությունն ապահովելու համար:

Ցուցանիշ 14.2: Վիճակագրությունը համադրելի է ողջամիտ ժամանակահատվածում:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Փոփոխություններ հասկացություններում:** Էական փոփոխություններն իրականում արտացոլվում են հասկացություններում համապատասխան փոփոխություններով (դասակարգումներ, սահմանումներ և թիրախային համակցություն):

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

2. **Մեթոդներում փոփոխությունների բացահայտում և չափում:** Փոփոխությունները մեթոդներում հստակորեն բացահայտվում են և դրանց ազդեցությունը չափվում է համեմատությունը դյուրին դարձնելու նպատակով:
3. **Ժամանակային շարքերի ընդհատումների հրապարակում և բացատրություն:** Շարքերի ընդհատումները բացատրվում են և ժամանակահատվածի ընթացքում համեմատությունն ապահովող մեթոդները հանրայնացվում են:

Ցուցանիշ 14.3: Տարբեր հետազոտություններում և աղբյուրներում վիճակագրությունը կազմվում է միասնական ստանդարտների հիման վրա՝ կապված շրջանակի, սահմանումների, միավորների և դասակարգումների հետ:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Համաձայնեցվածությանը և հետևողականությանը խթանելու մեխանիզմ:** Կիրառվում է հասկացությունների ընդհանուր շտեմարան կամ համաձայնեցվածությանը և հետևողականությանը խթանելու մեխանիզմ:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

2. **Ստանդարտներին համապատասխանության գնահատում:** Սահմանումների, միավորների և դասակարգումների ստանդարտներին համապատասխանության պարբերական գնահատումներ են իրականացվում և արտացոլվում որակի հաշվետվություններում:
3. **Ստանդարտներից շեղումների բացատրություն:** Սահմանումների, միավորների և դասակարգումների ստանդարտներից շեղումները բացահայտվում են և շեղումների պատճառները բացատրվում են:

Ցուցանիշ 14.4: Տարբեր աղբյուրներից և տարբեր պարբերականությամբ վիճակագրությունը համեմատվում և համաձայնեցվում է:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

1. **Վիճակագրական արտադրանքի համեմատությունը համապատասխան տվյալների հետ:** Վիճակագրական արտադրանքները համեմատվում են այլ վիճակագրական կամ վարչական տվյալների հետ, որոնք տրամադրում են համանման կամ նմանատիպ տեղեկատվություն նույն բնագավառի / երևույթի վերաբերյալ:
2. **Շեղումների հայտնաբերում և բացատրություն:** Տարբեր աղբյուրներից ծագող շեղումները բացահայտվում են և պատճառները հստակ և հրապարակայնորեն բացատրվում են:
3. **Վիճակագրական արտադրանքի համաձայնեցում:** Վիճակագրական արտադրանքները համաձայնեցվում են , երբ հնարավոր է:

Ցուցանիշ 14.5: Տվյալների խաչաձև ազգային համադրելիությունը ապահովված է Եվրոպական վիճակագրական համակարգի և այլ վիճակագրական համակարգերի միջև պարբերական փոխանակումների միջոցով: Մեթոդաբանական ուսումնասիրություններն իրականացվում են անդամ երկրների և Եվրոստատի միջև սերտ համագործակցությամբ:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Համադրելիության գնահատման ինստիտուցիոնալիզացիա:**
Համադրելիության պարբերական գնահատումները ինստիտուցիոնալացված են:
2. **Համագործակցություն մեթոդաբանական ուսումնասիրություններում:**
Մեթոդաբանական ուսումնասիրություններն իրականացվում են անդամ երկրների և Եվրոստատի միջև համագործակցությամբ:
3. **Տվյալների համադրելիության գնահատում Եվրոստատի կողմից:**
Եվրոստատը գնահատում է տվյալների համադրելիությունը անդամ երկրներից հայցվող որակի հաշվետվություններից:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

4. **Անհամաչափությունների վերլուծություն:** Որտեղ հնարավոր է իրականացվում է անհամաչափությունների վերլուծություն և անդամ երկրների միջև հայելային վիճակագրության հաշվետվությունները հանրայնացվում են:
5. **Հայելային վիճակագրությունում անճշտությունների հայտնաբերում և ուղղումներ:** Հայելային վիճակագրությունում անճշտությունները հայտնաբերվում և ուղղվում են, երբ հնարավոր է:

Սկզբունք 15. Մատչելիություն և պարզություն

Եվրոպական վիճակագրությունը ներկայացվում է պարզ և հասկանալի տեսքով, տարածվում է հարմար և հարմարավետ ձևով, մատչելի և հասանելի է անկողմնակալ կերպով աջակցող մեթատվյալների և ուղղորդման հետ:

Ցուցանիշ 15.1: Վիճակագրությունը և համապատասխան մեթատվյալները ներկայացվում են և արխիվացվում այնպիսի ձևով, որը հեշտացնում է պատշաճ մեկնաբանումը և իմաստալից համադրումները:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Տարածման քաղաքականություն:** Առկա և հանրայնացված է տարածման քաղաքականություն, որը սահմանում է տարածման գործելակերպերը: Առկա են ընթացակարգեր (օրինակ, աշխատանքային խումբ կամ համանման կառույց սիստեմատիկորեն և պարբերաբար վերանայելու տարածման

ստանդարտները, գնահատելու, թե արդյոք դրանք արդիական են և համապատասխան) վիճակագրական արդյունքների տարածման ստանդարտները վերանայելու համար:

2. **Խորհրդակցություններ սպառողների հետ տարածման վերաբերյալ:** Կանոնավոր կերպով սպառողների հետ խորհրդակցվում է տարածման առավել համապատասխան ձևերի վերաբերյալ (օրինակ, ֆոկուս խմբեր, սպառողների բավարարվածության հետազոտություններ):
3. **Ուսումնական դասընթացներ մեկնաբանություններ և մամուլի հաղորդագրություններ գրելու վերաբերյալ:** Անց են կացվում ուսումնական դասընթացներ վիճակագրության մեկնաբանման և մամուլի հաղորդագրություններ գրելու վերաբերյալ:
4. **Վիճակագրության և մեթատվյալների արխիվացման քաղաքականություն:** Առկա է վիճակագրության և մեթատվյալների արխիվացման քաղաքականություն:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

5. **Հրապարակումներում ներառված համադրումներ:** Անհրաժեշտության դեպքում իմաստալից համադրումները հստակ ներառված են հրապարակումներում:

Ցուցանիշ 15.2: Տարածման ծառայությունները օգտագործում են ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաները, և, անհրաժեշտության դեպքում, ավանդական թղթային:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Կայքի և վիճակագրական տվյալների բազաների համապատասխանությունը համընդհանուր ուղեցույցներին:** Կայքը և վիճակագրական տվյալների բազաները հնարավորինս համապատասխանում են համընդհանուր վեբ բովանդակության հասանելիության ուղեցույցներին (օրինակ, վեբ բովանդակության հասանելիության ուղեցույցներ (WCAG):
2. **Կայք, վիճակագրական տվյալների բազաները և ինքնուրույն աղյուսակավորում:** Կայքը և վիճակագրական տվյալների բազաները վիճակագրական արդյունքները տարածելու հիմնական միջոցներն են և դյուրին են դարձնում ինքնուրույն աղյուսակավորումը առավել համապատասխան ձևաչափերով (օրինակ, XLS, HTML):

3. **Տեղեկատվական ծառայություն / զանգերի սպասարկման կենտրոն:** Առկա է տեղեկատվական ծառայություն / զանգերի սպասարկման կենտրոն կազմված բանիմաց անձնակազմից՝ հարցումներին պատասխանելու և վիճակագրական արդյունքների պարզաբանումների համար:
4. **Հրապարակումների համացանկ:** Հրապարակումների համացանկը մատչելի է սպառողներին:
5. **Վերատարածման դյուրինացում:** Վիճակագրական արդյունքները տարածվում են օգտագործելով գործիքներ և ձևաչափեր, որոնք նպաստում են լրատվամիջոցների կողմից վերատարածմանը, օրինակ՝ մամուլի հաղորդագրությունների, վիճակագրության հետ կապված պատրաստի աղյուսակների, դիագրամների, քարտեզների, մեթատվյալների միջոցով:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

6. **Տարածման տարբեր ձևերի ուսումնասիրություն:** Ուսումնասիրվում են տարածման տարբեր ձևեր (օրինակ, օպտիկական սկավառակներ, վեբ գործիքներ և ծրագրեր, թղթային տարբերակներ), որոնք հնարավորություն կտան որոշակի արդյունքների առավել լավ ըմբռնման և համադրումների և առավել կյուրիոսացնեն դրանց օգտագործումը որոշում կայացնելիս:

Ցուցանիշ 15.3: Պատվերով նախագծված վերլուծությունները տրամադրվում են, երբ հնարավոր է և հանրությունը տեղեկացվում է:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Պատվերով նախագծված վերլուծությունների հնարավորության և պայմանների վերաբերյալ կապ:** Պատվերով նախագծված վերլուծությունների հնարավորությունը և պայմանները հստակ հաղորդվում են:
2. **Պատվերով նախագծված արտադրանքների տրամադրում:** Պատվերով նախագծված արտադրանքները տրամադրվում են հայցման հիման վրա:
3. **Պատվերով նախագծված վերլուծությունների հրապարակում:** Երբ հնարավոր է, որ պատվերով նախագծված վերլուծությունները հանրայնացվեն:
4. **Պատվերով նախագծված վերլուծությունների համար հայցեր ներկայացնելու տեղեկատվական ծառայություն:** Առկա է տեղեկատվական

ծառայություն, որը հնարավորություն է տալիս սպառողներին հայցեր ներկայացնել պատվերով նախագծված վերլուծությունների համար:

Ցուցանիշ 15.4. Մուտքը միկրոտվյալներին թույլատրվում է հետազոտական նպատակներով և ենթակա է հատուկ կանոնների և արձանագրությունների:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Հետազոտողներին խորհրդատվություն:** Հետազոտողները պարբերաբար խորհրդատվություն են ստանում միկրոտվյալներ մուտք գործելու կանոնների կամ արձանագրությունների վերաբերյալ, դրանց արդյունավետության և արդյունավետ մուտքի վերաբերյալ:
2. **Միկրոտվյալներ մուտք գործելու կանոնների կամ արձանագրությունների հրապարակում:** Միկրոտվյալներ մուտք գործելու կանոնները կամ արձանագրությունները հանրայնացվում են:
3. **Անվտանգ միջավայրում միկրոտվյալներ մուտք գործելու հնարավորություններ:** Հետազոտողները կարողանում են մուտք գործել միկրոտվյալներ ապահով միջավայրում (օրինակ՝ ապահով կենտրոններ):
4. **Հեռահար մուտքի հնարավորություններ:** Առկա են հեռահար մուտքի հնարավորություններ համապատասխան վերահսկումներով:

Ցուցանիշ 15.5. Մեթատվյալները փաստաթղթավորվում են համաձայն ստանդարտացված մեթատվյալների համակարգերի:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Վիճակագրական արդյունքների և մեթատվյալների տարածում:** Բոլոր վիճակագրական արդյունքները տարածվում են համապատասխան մեթատվյալների հետ միասին՝ հնարավորություն ընձեռելով առավել լավ հասկանալ արդյունքները:
2. **Վիճակագրական արտադրանքին հղված մեթատվյալներ:** Եթե մեթատվյալներն առկա են վիճակագրական արտադրանքից առանձին, ներկայացվում են հստակ հղումներ:
3. **Մեթատվյալների համապատասխանությունը Եվրոպական ստանդարտներին:** Մեթատվյալները կազմված են և տարածվում են Եվրոպական ստանդարտներին համապատասխան (օրինակ՝ SIMS):

4. Հրապարակման ձևաչափից անկախ մեթատվյալներ: Վիճակագրական արդյունքների մեթատվյալները հասանելի են հրապարակման ձևաչափից անկախ (օրինակ վեբ, թղթային տարբերակներ):
5. Մեթատվյալներն արդիականացնելու և հրապարակելու ընթացակարգեր: Մեթատվյալները պարբերաբար արդիականացվում են և առկա են արդիականացումն ապահովելու ընթացակարգեր:
6. Մեթատվյալների հետ կապված հարցերը պարզաբանելու հնարավորություն: Տեղեկատվական ծառայությունը/ զանգերի սպասարկման կենտրոնը կարող է պարզաբանել մեթատվյալների հետ կապված հարցերը:
7. Մեթատվյալների վերաբերյալ ուսումնական դասընթացներ անձնակազմի համար: Անձնակազմի համար կազմակերպվում են մեթատվյալների վերաբերյալ ուսումնական դասընթացներ:

Ցուցանիշ 15.6. Սպառողները տեղեկացվում են վիճակագրական գործընթացների մեթոդաբանության մասին, ներառյալ վարչական տվյալների օգտագործումը:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. Որակի հաշվետվությունների արտադրության պլանավորում: Ստանդարտացված, արդիական, սպառողին ուղղված որակի հաշվետվությունների պարբերական արտադրությունը և մեթոդաբանական փաստաթղթերը պլանավորվում են վիճակագրական մարմնի աշխատանքային ծրագրում:

Մեթոդներ արտադրանքի/գործընթացի մակարդակով

1. Որակի հաշվետվությունների և մեթոդաբանական փաստաթղթերի հրապարակում: Սպառողին ուղղված որակի հաշվետվությունները և մեթոդաբանական փաստաթղթերը հանրայնացվում են:

Ցուցանիշ 15.7. Սպառողները տեղեկացված են վիճակագրական արտադրանքների որակի վերաբերյալ՝ համաձայն Եվրոպական վիճակագրության որակի չափանիշների:

1. Որակի հաշվետվությունների հրապարակում: Սպառողին ուղղված որակի հաշվետվությունները հանրայնացվում են:
2. Որակի հաշվետվությունների համապատասխանությունը ԵՎՀ ստանդարտների և ուղեցույցների հետ: Սպառողին ուղղված որակի

հաշվետվությունները սահմանվում են որակի հաշվետվողականության ԵՎՀ ստանդարտներին և ուղեցույցներին համապատասխան: